

Կ.Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ

ԴՏԴ 799.3 (07)

ԳՄԴ 75.723 ց7

գ 316

Գասպարյան Կ.Ն.

գ 316 Սպորտային հրաձգություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2005.- 63 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ֆԿՇՊԻ-ի «Հրաձգություն» առարկայի դասավանդման համար, որը համապատասխանում է ուսումնական ծրագրով նախատեսված «Հրաձգություն» առարկայի բոլոր պահանջներին:

Ուսումնամեթոդական ձեռնարկը օգտակար կլինի նաև դպրոցներում և ԲՈՒՀ-երում հրաձգություն դասավանդելու ընթացքում: Այն հասցեագրված է նաև մարզադպրոցների սկսնակ հրաձիգ մարզիկների և նարզիչների համար:

Ուսումնամեթոդական ձեռնարկը կարևոր նշանակություն ունի պաշտպանության նախարարության ուսումնական հաստատության ունկնդիրների համար:

ԳՄԴ 75. 723 ց7

ԵՐԵՎԱՆ 2005

Հեղինակային հրատարակություն

ISBN 99930 - 4 - 307 - 9

© Կ.Ն.Գասպարյան, 2005 թ.

ԳԼՈՒԽ I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական դաստիարակության համակարգում հրաձգային սպորտը զբաղեցնում է առաջատար տեղերից մեկը: Մեծ է հրաձգային սպորտի կիրառական և դաստիարակչական նշանակությունը: Ուստինամարզական պարապանունքների և նորումների ժամանակ դպրոցականների, ուսանողների և մարզիկների մոտ դաստիարակվում են բնավորության այնպիսի գժեր, ինչպիսիք են՝ կարգապահությունը, քաջությունը, հաստատականությունը, դրվագությունները հաղթահարելու ունակությունները, աշխատասիրությունը, հաճատեղ աշխատանքի ձգտումները:

Անհիշելի ժամանակներից դիպուկ կրակելը մարդկանց համար ունեցել է կենսական նշանակություն. այն կարևոր է եղել ինչպես սննդի հայրայրման գործում, այնպես էլ պատերազմների ու արշավների ժամանակ:

Դեռևս ուրարտական բանակում (մ.թ.ա. 9-6-րդ դարեր) գոյություն է ունեցել նետաձիգների հզոր բանակ: Դայերը, սկյուրները (Սև ծովի հյուսիսային ափեր), սորմատները (Դյուսիսային Կուրան) և այլ ժողովուրդներ եղել են հնուտ նետաձիգներ:

Նետ-ադեղից մինչև վառողի հայտնագործումը՝ 11-րդ դարը, եվրոպացիների կողմից ստեղծվել է գենքի մի տեսակ, որը կոչվել է արրալեն: Այն կազմված է նետ-ադեղի և հրացանի տարրերից:

Դրագենի գոյության մասին առաջին անգամ հիշատակված է չինական իհն ձեռագրերում (13-րդ դար՝ 1253 թ.): Դանաձայն այդ տեղեկությունների՝ վառողի ստեղծումից հետո եղեգնից պատրաստել են հրազեն հիշեցնող մի սարք, որն ունեցել է 50-60 սմ երկարություն: Եղեգնի ներսի մասը հիկել են, մի ծայրը խցանել, ապա խցանված կողմից վերջնամասում լիցքավորված վառողը այրելու նպատակով բացել են փոքր պատուհան:

Դրագենի մասին հաջորդ հիշատակումը եղել է 1291 թ. արաբական ձեռագրերում, որտեղ նշվում է 1,5 մ երկարություն ունեցող գերաններից պատրաստված հրանոթ հիշեցնող սարքի մասին, որի միջոցով կրակել են քարե գնդեր:

Դրագենը մեծ արագությամբ զարգացավ Եվրոպայում 12-րդ դարում: Այնտեղ պատրաստվեցին առաջին մետայա գենքերը: Դրաձգությունը՝ որպես մարզաձև, ունի վաղեմի պատմություն: Առաջին մրցումները կայացել են Գերմանիայի Աուստրիա քա-

ղաքում 1432թ.: Բայց միայն Ֆրանկֆուրտում տեղի ունեցավ ազգային հրաձգության տոնախմբություն: Արդեն 1884թ. հաշվում էր ավելի քան 712 միություն, որի մեջ միավորված էին 60 հազ. ավելի հրաձիգներ:

Դաշվի առնելով հրաձգության մարզաձևի ստրատեգիական նշանակությունը՝ այն արագորեն զարգանում էր եվրոպական միշտարք երկրներում, Ռուսաստանում, Ամերիկայում և այլուր:

1896 թ.-ից ի վեր գնդակային հրաձգությունը ընդգրկված է բոլոր օլիմպիական խաղերի ծրագրերում, բացի 1924թ. Սենտ-Լուիսի (ԱՄՆ), 1928թ. Ամստերդամի, իսկ 1897 թվականից (Ֆրանսիա) սիստեմատիկաբար անցկացվել են աշխարհի առաջնություններ:

Ռուսաստանը իր հրաձիգներին ուղարկել է Ստոկհոլմ՝ մասնակցելու 5-րդ Օլիմպիական խաղերին 1912 թ., որտեղ նրանք հանդես եկան շատ բույշ արդյունքներով և մարտական հրացանի մրցումներում գրավեցին նախավերջին տեղը՝ 9-րդ: Իսկ ատրճանակի հրաձգության մրցումներում գրավեցին 2-րդ և 4-րդ տեղերը (մենամարտային հրաձգություն): Դրա պատճառն այն էր, որ թիմը ապահովված չէր որակյալ գենքով և զինամքերքով, ինչպես նաև պատշաճ մակարդակով չէր նախապատրասվել այդ մրցումներին:

Մինչև 1907 թ. հրաձգային առաջնությունների կազմակերպման հարցով զբաղվում էր միջազգային փորձագետների հատուկ խումբ, իսկ 1907թ.-ից՝ ազգային հրաձգային ֆեդերացիաների և ասոցիացիաների միջազգային միությունը, 1921թ.-ից՝ հրաձգային սպորտի միջազգային միությունը (ՁԼՉ): ՁԼՉ-ը իր կազմի մեջ ընդգրկում է աշխարհի շուրջ 115 երկրներ: ՁԼՉ-ի հիմնական խնդիրները օլիմպիական խաղերի և աշխարհի առաջնությունների կազմակերպումն ու անցկացումն է, մարզաձևի զարգացումն ու տարածումը, մի շարք այլ կազմակերպչական հարցեր: Մինչև 1914 թ.-ը, հետո 1921-ից մինչև 1925թ.-ը, 1927թ.-ից 1931թ.-ը աշխարհի առաջնությունները անցկացվել են ամեն տարի, իսկ 1933-ից մինչև 1939թ. և 1947-ից մինչև 1949թ.-ը՝ երկու տարին մեկ: 1954թ.-ից սկսած աշխարհի առաջնությունները անց են կացվել չորս տարին մեկ: 1911թ.-ից մինչև 1928թ.-ը հրաձգության առաջնության ծրագիրը կազմված էր երեք վարժություններից: Կմ-6՝ կամավոր հրացան, Ըթ-5՝ բանակային հրացան, Ծկ-6 (թվերը ցույց են տալիս վարժությունների հերթական պայմանակն ինդեքսը):

1929 թ.-ին առաջնության ծրագրի մեջ անգամ ընդգրկվեց փոքր տրամաչափային հրացանից 50 մ-ի վրա պառկած դիրքից կրակելը՝ 40-ական կրակոցներով:

Աշխարհի առաջին առաջնության ծրագիրը ընդգրկում է միայն մեկ վարժություն՝ հրաձգության բանակային հրացանով 300 մ տարածության վրա՝ պառկած, ծնկած և կանգնած դիրքերից: Հետագա տարիներին բացի հրացանային հրաձգությունից, կատարվում էր նաև հրաձգություն 50 մ տարածության վրա խոշոր տրամաչափային ատրճանակից, որը 1905թ.-ին (9-րդ առաջնությունում) փոխարինվեց կամավոր փոքր տրամաչափային ատրճանակով (Ծկ-6 վարժություն): Այս երկու վարժությունները ընդգրկվեցին մինչև 1910թ.-ի (14րդ) առաջնություններում: 1929թ.-ին հրաձգագին մարզաձևի առաջնության ծրագրում առաջին անգամ ընդգրկվեց հրաձգություն «վազող եղնիկ» թիրախով վարժությունը (կթ-2 կթ-3):

Վերջին վարժություններն ունեին տարբեր ծրագիր, որը կազմված էր ընդհանուր բարձրությամբ 23 վարժություններից: Այս ծրագրով առաջնությունները անցկացվեցին մինչև 1975թ.-ը: Ներկայումս ծրագիրը կանոնակարգված է: Այդ ծրագրում ընդգրկված է 13 վարժություն տղամարդկանց և 5 վարժություն կանանց համար: Խաղարկվում է մերավների 44 կոմայլեկոտ:

Միջազգային օլիմպիական կոմիտեն որոշել է ամբողջ աշխարհում ընդլայնել սպորտային հրաձգության ծրագիրը: 23-րդ օլիմպիական խաղերից սկսած ծրագրի մեջ մտան չորս ինքնուրույն վարժություններ կանանց համար, Ծկ-5 ստանդարտ փոքր տրամաչափային հրացանից 50, 60 կրակոց 3 դիրքի՝ պառկած, կանգնած, ծնկած /3x20/, Թկ-4 օդամղիչ հրացանից 10 մետրից 40 կրակոց՝ կանգնած դիրքում, Ծկ-5 ստանդարտ փոքր տրամաչափային ատրճանակից սև շրջանակով թիրախին և շրջվող թիրախին 25 մ տարածության վրա 60կրակոց (30x30), Կկ-2 օդամղիչ ատրճանակից 10 մ-ից 40 կրակոց:

Տղամարդկանց ծրագիրը համալրվել է վարժությամբ. Թկ-6 օդամղիչ հրացան, 10 մ տարածության վրա 60 կրակոց կանգնած դիրքում (կկ-3, Թկ-12):

Այսպիսով՝ հրազենային հրաձգությունից խաղարկվում է մեղալների 11 կոմայլեկոտ՝ 7 վարժություն տղամարդկանց և 4 վարժություն կանանց համար:

Դայաստանում այս մարզաձևով սկսել են զբաղվել խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1928թ.-ին տեղի ունեցած առաջին Դամանիութենական սպարտակիադային Դայաս-

տանը ներկայացել էր կանոնավոր թիմով: Այդ տարիներից սկսած՝ հանրապետությունում պատրաստվել են բազմաթիվ բարձրակարգ մարզիկ-հրաձիգներ, որոնք հաղթել են օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպական առաջնություններում: Այդ մարզիկ-մարզուիհներից են՝ Զինահիա Սիմոնյանը, Յրաչյա Պետիկյանը, Գագիկ Զոհրաբյանը, Երջանիկ Արգարյանը:

Սպորտի ԽՍՀՄ վաստակավոր վարպետ Զինահիա Սիմոնյանը ԽՍՀՄ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների բազմակի ռեկորդակիր է և չեմպիոն: 1973թ.-ին Եվրոպայի առաջնությունում սահմանել է համաշխարհային ռեկորդ. բարձրացել է 7 միավորով՝ 384 միավոր 400 հնարավորությունից: 1974թ. նա օդամղիչ ատորածանակի 40 կրակոցով (10 մ տարածություն) հավաքեց 381 միավոր: Չեմպիոնուիհն Ծկ-5 վարժությունից հավաքեց 592 միավոր 600 հնարավորությունից (25մ տարածություն), ստանդարտ ատրճանակից էլի 1ուկե մեդալ (Մկ-5): Յրաչյիկ Պետիկյանը սպորտի վաստակավոր վարպետ է, 1992 թ. Բարսելոնի օլիմպիական խաղերի չեմպիոն՝ փոքր տրամաչափի հրացանի 120 կրակոց 50 մ վարժությունից: Գագիկ Զոհրաբյանը միջազգային կարգի սպորտի վարպետ է, «Սովետկան հայրենասեր» միջազգային հրաձգագին մրցումների հաղթող, 1971-1974 թթ. ԽՍՀՄ չեմպիոն և ԽՍՀՄ ժողովուրունների 1971թ. սպարտակիադայի չեմպիոն:

ԳԼՈՒԽ 2.

ՀՐԱՋԳՈՂՈՅԻՆ ՄԱՐԶԱՉԵՎԻ և ԶԵՆՔԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1 Հրաձգության բնութագիրը

Հրաձգություն մարզածեղ մարզիկի նկատմամբ ունի յուրահատուկ պահանջներ: Եթե այլ մարզածերում ֆիզիկական պատրաստականությունը առաջատար է, ապա այստեղ պահանջվում է գործողությունների միատարրություն, մկանների չափավոր լարվածություն, հավասարակշռվածություն:

Հրաձգություն մարզածի ազդեցությունը օրգանիզմի վրա պայմանավորվում է մկանային ապարատի ստատիկ բնույթի բեռնվածությամբ, նյարդային համակարգի մեջ լարվածությամբ, լսողական անալիգատորների ուժեղ գրգռվածությամբ, ինչպես նաև տեսողության բարձր լարումով:

Հրաձգությունը կատարվում է բաց, փակ և կիսափակ հրաձգարաններում: Հրաձգարան է կոչվում այն շինարարական կառույցը, որը ունի տարրեր տեսակի գենքերից անվտանգ հրաձգություն իրականացնելու սարքավորումներ: Փակ տեսակի հրաձգարանները լիովին անվտանգ են, քանի որ բացառվում է գնդակի թռիչքը հրաձգարանից դուրս: Այսպիսի հրաձգարանները կարելի է տեղաբաշխել քաղաքի ցանկացած շրջանում, գյուղական վայրերում, դպրոցի շրջակայքում: Կիսափակ հրաձգարանները բացառում են գնդակի թռիչքը հրաձգարանից դուրս ուղիղ կրակոցների դեպքում, բայց հնարավոր է գնդակի մնացորդների թռիչքը: Դաշվի առնելով թռիչքի ոչ մեջ տարածությունը, հետ մղվելու դեպքում մահացու վտանգի փոքրությունը՝ այսպիսի հրաձգաները կարելի է կառուցել բնակելի տարածքներից հեռու:

Բաց տեսակի հրաձգարաններում չեն բացառվում գնդակի թռիչքի հնարավորությունը ուղիղ կրակոցների դեպքում ևս: Դրա համար էլ դրանք պետք է կառուցել միայն բնակելի տարածքներից հեռու կամ էլ կղմնակի մարդկանց անհասանելի վայրերում:

Բոլոր տեսակի հրաձգարանները՝ փակ, կիսափակ և բաց, կազմված են հրաձգային տաղավարից, որտեղ տեղավորված են հրաձգության սրահը և կից կառույցները՝ կրակագոտին, որը հրաձգության այն տարածքն է, որի մեջ մտնում է նաև թիրախների գոտին, բինդաժը և թիրախների հետևի տարածությունը, անվլուանգության գոտին, որը միայն բաց տեսակի հրաձգարանների համար է:

Բաց և կիսափակ հրաձգարաններում հրաձգության հիմնական ուղղությունը, որպես կանոն, ընդունվում է հարավից-հյուսիս, որպեսզի խուսափեն արևի ճառագայթների կուրացնող ազդեցությունից: Փակ հրաձգարաններում հրաձգությունը անցկացնում են արհեստական լուսավորության տակ: Օգնող կից կառույցները լուսավորվում են համընդհանուր ընդունված նորմերով: Հրաձգության արդյունքները կախված են այն բանից, թե ինչպես է լուսավորված կրակագոտին, թիրախները և կրակային սահմանների հրապարակը: Վատ լուսավորությունը խանգարում է կրակողին, ստիպում է լարվել, որը և բացասաբար է անդրադարձում հրաձգության արդյունքների վրա: Լուսավորող սարքերը պետք է գլունվեն ներքևում՝ գետնի վրա, և վերևում՝ առաստաղին, թիրախների գծին զուգահեռ: Փակ հրաձգարանների կրակագոտու սարքավորումները չեն սահմանափակվում միայն հատուկ լուսավորությամբ: Մեծ նշանակություն ունի նաև ջեռուցումը և օդափոխությունը: Կրակագոտում ջերմաստիճանը պետք է լինի $+12^{\circ}\text{C}+15^{\circ}\text{C}$: Դրա համար կառուցվում են ներհոս-օդաքաշ օդափոխիչներ, նաև օդանցքային օդափոխիչներ: Դրանք օդափոխիելուց բացի օգնում են նաև կրակագոտուց դուրս հանել կրակելուց առաջացած զագերը:

Բաց հրաձգարաններում արդյունքների վրա կարող են բացասաբար ազդել այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են՝ քամու առկայությունը, օդի ջերմաստիճանը, ինչպես նաև հրաձգարանի սարքավորումները՝ թիրախների բարձրությունը, նըրանց միջև ընկած հեռավորությունը, քամու ուժը պակասեցնող ցանցերի և ուղղությունը որոշելու համար տեղադրված դրոշակների առկայությունը, սպասարկող անձնակազմի և հանդիսատեսների հեռավորությունը կրակագծից: Ուստի անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի հրաձգարանում կարգավորվեն վերը նշված բացասական երևույթները, որպեսզի առաջնությունների ժամանակ արդյունքները լավ լինեն:

Հրաձգության առաջնությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել հետևյալ կարևոր գործոնները, որոնք ևս կիսրանեն առաջնությունների արդյունքների լավացմանը:

ա/ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՊԱՐԿՎԱԾՈՂԹՅՈՒՆ

Պատահում է, որ նյութական մասի (գենքի և փանփուշտի) ոչ ճիշտ նախապատրաստությունից մարզիկը մնոցումների ժամանակ կարող է կորցնել բանկարժեք միավորներ: Վատ ընտրված ժամանակակը կամ հրացանը, նրանց անսարքությունը կրակողին

հանում է հավասարակշռությունից, գցում է սովորական տեմպից: Մինչև կրակողը ստուգում է զենքի անսարքությունները, լրացուցիչ ժամանակ է ծախսում: Դրա համար էլ այդ ամենը պետք է ստուգվեն նախօրոք: Զենքի և փամփուշտների որակների նախնական ստուգումը հրաձգին ինքնավստահություն է հաղորդում մրցումների ժամանակ:

Բ/ՈՒԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԾԵՂՈՂ ՂԱՍՎԱՍԱԲԵՐ

Ղանդիսատեսի պահպածքը, մրցավարի սուլիչի ձայնը, կողմնակի ձայները, բարձր երաժշտությունը խանգարում են մարզիկների ժամանական կենտրոնական կատարելու հրաձգության հիմնական տեխնիկական էլեմենտները: Ահա թե ինչու ցանկալի է մարզվել առանց հանդիսատեսների ներկայության: Մրցումների արդյունքները պետք է հայտնել այնպես, որ լսեն մասնակիցները և կախել այդ արդյունքները երևացող տեղում:

Այս բոլոր հանգանանքները ինձնանալով՝ մարզիկները պետք է լրջորեն վերաբերվեն իրենց գործողություններին նոցումների ժամանակ: Մրցումները անցկացնող մարզիչները իրենց մարզիկների ստուգողական կրակոցներից հետո երեմն դիտմամբ բարձրացն ըննարկում են նրանց գործողությունները, իսկ հետո հարցում են մարզիկներին, թե նրանք լսե՞լ են արդյոք՝ ինչի մասին է եղել խոսքը, և մարզիկները նույնությամբ կրկնում են լսածը: Մրանով մարզիչները փորձում են իրենց մարզիկների ուշադրությունը և համոզվում են, որ նրանք ամբողջովին «չեն անջատվում» կողմնակի հանգանանքներից:

Գ/ ՔՐԱՉԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱԿԱՐՆԵՐ

Մարզումների ժամանակ մարզիկը ընտելանում է գործողությունների որոշակի տեմպին՝ ծախսել որոշակի ժամանակ կրակելու վրա և հանգստի վրա: Այդ ժամանակը նախատեսված է նոցումների կանոններով, իսկ եթե այս կամ այն պատճառով տեղի են ունենում չնախատեսված դադարներ, օրինակ՝ զենքի անսարքելիություն, թիրախների ոչ ճիշտ տեղադրում և այլն, որոնք ստիպում են կրակողին դուրս գալ իր սովորական սիթմից: Նա հուզվում է, որից վատանում են նրա արդյունքները: Դրա համար էլ անհրաժեշտ է բացառել այդպիսի դադարները: Այս բոլորը սովորեցնում է մարզիկներին պատրաստ լինել ցանկացած անսպասելի երևույթների, դաստիարակում է նրանց մեջ կանք և համբերություն:

Դ/ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ, ՍԱՍՉՏԱԲԸ ԵՎ ՔԱՆԱԿԸ

Որպես կանոն, հրաձիգները մարզվում են նույն պայմաններում և վարժվում են այդ պայմաններին: Ուստի երբ մեկնում են մրցումների, որոնք անցկացվում են այլ հրաձգարաններում, հայտնվում են անսովոր հրադրության մեջ: Խցիկների դասավորությունը և նրանց սարքավորումը, թիրախների նոր դասավորությունը, լուսվորումը, հրաձգության արդյունքների ցուցադրումը բացահայտ հոգեբանական ֆոն են ստեղծում:

Ղանդիսատեսի ներկայությունը, շքերթի հանդիսավորությունը հրաձգի մոտ առաջանում են մեծ պատասխանատվության գգացում և՝ թիմի, և՝ իր անձնական արդյունքների համեմատ: Մարզումների ժամանակ մարզիչները մարզիկներին նախօրոք պետք է տեղեկացնեն մրցումների բնույթի, մասշտաբների, կազմակերպման մասին, մոտավորապես ծանոթացնեն, թե ովքեր են հնարավոր մրցակիցները և ինչ նվաճումներ ունեն: Մարզիչները պետք է նախօրոք պլանավորեն և կարգավորեն նաև մրցումների քանակը, քանի որ այդ քանակը կարող է ազդել արդյունքների ցանկալի ցուցանիշի վրա:

Ե/ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՎՐՄ

Հրաձիգի տեխնիկական պատրաստությունը այն հիմնական պայմանն է, որը ապահովում է բարձր արդյունքները մրցումների ժամանակ: Այն որոշվում է մարզումների ժամանակ ցույց տված միջին արդյունքներով և թույլ է տալիս համարյա անսխալ գուշակել, թե քանի միավոր կվաստակի մարզիկը: Տեխնիկական լավ պատրաստվածությունը հող է նախապատրաստում հոգեբանական պատրաստվածության համար, լավացնում է նրա ինքնազգացողությունը և ամրացնում վստահություն հաղթանակի նկատմամբ: Մարզիչը պետք է նպատակին ուղղի մարզիկի գործունեությունը: Դա նշանակում է, որ մրցումների ժամանակ մարզիկը կարող է արագ կողմնորոշվել և ընտրել նախապատրաստության լավագույն տարրերակը, շնչառության ռեժիմը և այլն:

Ֆիզիկական պատրաստվածությունը մարզիկին թույլ է տալիս շուտ հաղթահարել հոգնածությունը, որն առաջ է գալիս մեծ բեռնվածությամբ մարզումների ժամանակ: Ընդհանուր զարգացնող և մասնագիտական վարժությունները օգնում են կատարելագործել մարզիկի մոտ այնպիսի ընդունակություններ, ինչպիսիք են՝ դիմացկունությունը, հաստատակամությունը, շարժողական ռեակցիայի արագությունը և այլն:

Լողը, դահուլկավագքը, ծանրամարտը, հեծանվավագքը օգնում են հրածիզ-մարզիկին հասնելու լավ արդյունքների և պահպանելու սպորտային նարզավիճակը, մարմնի հավասարակշռությունը, մկանային համակարգի կոորդինացված աշխատանքը:

գ/ ՍԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԻ ՎԻՃԱԿԱԴԱՍՈՒԹՈՒՆԸ

Բարձր կարգի մոցումները անց են կացվում հերթով, որպեսզի մարզիկները իմանան իրենց թիմակիցների արդյունքները, զնահատեն դրանք և ծանրութերք անեն հաղթանակին հասնելու իրենց հնարավորությունները: Իսկ վիճակահանությունը կատարվում է կոնկրետ տեղի համար, որպեսզի հրածգարանին ծանրք մարզիկները իրենց համար առավել նպաստավոր տեղերը չընտրեն, և ստեղծվեն առավել հնարավոր հավասար պայմաններ բոլոր մարզիկների համար:

2.2 ՄԱՐԶԱԿԱՆ ԶԵՆՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԲՆՈԼԹԱԳՐՈՒՄԸ

Գնդակային հրածության բազմաբնույթ վարժությունները կատարվում են միմյանցից տարբեր տեխնիկական և բալիստիկական բնութագրեր ունեցող գենքերով: Մարզական գենքերը կարող են լինել փոքր տրամաչափի՝ 4,5 մմ, 5,6 մմ և խոշոր տրամաչափի՝ 7,62 մմ և 9,65 մմ, որոնք իրենց հերթին բաժանվում են կամավոր և ստանդարտ բնույթի:

Կամավոր բնույթի հրացանները կարող են ունենալ մինչև 8 կգ քաշ, դիօպտրական նշանացույց, շարժական հենակ, ձգանի արագացուցիչ և կորումի շարժական վերնամաս, որին հավում է դեմքը: Կարող են լինել փոքր կամ խոշոր տրամաչափերի՝ կախված վարժության պահանջներից: Զգանի քաշը սահմանափակում չունի:

Ստանդարտ բնույթի հրացանները պետք է համապատասխան որոշակի սահմանափակ պահանջների՝ քաշը մինչև 5 կգ, ձգանի ծանրությունը 500 գրամ, նշանացույցը դիօպտրական: Վերոհիշյալ լրացուցիչ սարքերը բացակայում են:

Մորճանակները, որոնցով կատարվում են համապատասխան վարժությունները, հրացանների նման միմյանցից տարբերվում են քաշով, ձևով, փողի երկարությամբ, տրամաչափով և ունեն տարբեր բնութագրեր: Օրինակ՝ «Ուոլվեր» տիպի ատրճանակի տրամաչափը 7,62-ից 9,65 մմ է, կրակում են 25 մ տարածության վրա, ձգանի քաշը 1360 գ-ից ավելի է, իսկ 50 մ տարածության վրա կատարվող Ծկ-6 վարժությունը կատարում են 5,6 մմ տրամաչափի ատրճանակով, որոնք ունեն օրթո-

պետիկական բռնակ, ձգանի քաշը սահմանափակում չունի: Բոլոր ատրճանակները բաց տիպի նշանացույցով են:

ԳԼՈՒԽ 3.

ԲԱԼԻՍՏԻԿԱ

Բալիստիկան գիտություն է չկառավարվող հրթիռների, հրանորային արկերի, ինչպես նաև կրակոցների հիմքում ընկած ֆիզիկական երևույթների և օրինաչափությունների մասին: Գոյություն ունի ներքին և արտաքին բալիստիկա:

3.1 ՆԵՐՋԻ ԲԱԼԻՍՏԻԿԱ

Սա գիտություն է, որը գրաղվում է այն գործընթացների ուսումնասիրությամբ, որոնք կատարվում են կրակոցի պահին: Կրակոց է կոչվում գնդակի դուրս մղումը գենքի փողից գագերի ուղեկցությամբ, որոնք առաջանում են վառողի վառվելու ժամանակ: Կրակոցի ժամանակ տեղի են ունենում հետևյալ երևույթները: Եթե հարվածում են մարտական փամփուշտի պատճին, նա սկսում է այլվել, կրակ է բռնկում, որը այրում է վառողային լիցքը: Այդ ժամանակ առաջանում է շիկացած գագերի մեջ քանակություն: Գագերի ճնշման տակ գնդակը շարժվում է տեղից, փողի մեջ պտտվելով՝ ձեռք է բերում մեջ արագություն և դուրս է նետվում փողի կենտրոնի ուղղությամբ: Այդ գագերի ճնշման տակ հրացանի փողը հետ է մղվում: Կրակոցի հետ միաժամանակ փողի տատանողական շարժում է տեղի ունենում, և այն տարանում է: Շիկացած գագերը և չայրված վառողի մնացորդները գնդակի հետևից դուրս են գալիս փողի միջից, հանդիպելով օդին, առաջանում են բոց և հարվածային ալիք, որից էլ առաջանում է հարվածի ձայնը: Կրակոցը կատարվում է շատ արագ, մոտավորապես 0,001-0,06 վայրկյանում: Կրակոցի ժամանակ առանձնագույն են չորս շրջաններ՝

1. նախնական
2. առաջին կամ հիմնական
3. երկրորդ շրջան
4. երրորդ կամ գագերի հետևանքների շրջան:

1. ՍԱԽՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Սա այն շրջանն է, երբ վառողային լիցքը սկսում է այրվել մինչև փողում գնդակի լրիվ խրվելը: Այս շրջանի ընթացքում հրացանի փողում առաջանում է գագերի ճնշում, որը անհրաժեշտ է, որպեսզի գնդակը տեղից շարժվի և հաղթահարի այն խոչընդոտները, որոնք խանգարում են իրեն հրացանի փողի մեջ խրվելու: Այս ճնշումը կոչվում է **հաղթահարման ճնշում** կախված փողում գնդակի պտույտների թվից, գնդակի քաշից և պատյանի ամրությունից: Ընդունված է, որ վառողի լիցքի այրումը այս ժամանակահատվածում կատարվում է հաստատուն ծավալով, գնդակը խրվում է անցքը ակնթարթորեն, իսկ նրա շարժումը սկսվում է անմիջապես հաղթահարման ճնշման ազդեցության տակ:

2. ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ՔԻՄԱԿԱՆ ՇՐՋԱԾՎ

Այս շրջանը տևում է գնդակի շարժման սկսման պահից մինչև այն պահը, երբ լիովին այրվում է վառողային լիցքը: Այս ժամանակաշրջանի սկզբում, երբ գնդակի շարժման արագությունը հրացանի փողի ներսում դեռ մեծ չէ, գագերի քանակը աճում է արագ, գագերի ճնշումը արագ բարձրանում է և հասնում է ամենաբարձր մեծության: Այս ճնշումը կոչվում է **ամենաբարձր կամ առավելագույն ճնշում**: Այն առաջանում է այն ժամանակ, երբ գնդակը անցնում է 4-6 սմ ճանապարհ: Վառողային լիցքը լրիվ այրվում է ոչ ուշ այն պահից, երբ գնդակը դուրս է նետվում փողից:

3. ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱԾՎ

Այս շրջանը սկսվում է լրիվ այրման պահից մինչև գնդակի թրիչքը փողից դուրս: Այս շրջանի սկզբում վառողային հոսքը ընդհատվում է, բայց ուժեղ սեղմված և այլված գագերը ընդարձակվում են, ազդում են գնդակի վրա, մեծացնում նրա շարժումը: Այս ժամանակաշրջանում ճնշման նվազումը տեղի է ունենում բավականին արագ փողաբերանի կտրվածքում: Փողաբերանային ճնշումը տարբեր գենքերի մոտ տարբեր է:

Փողաբերանային արագությունը մի քանի անգամ փոքր է սկզբնական արագությունից:

4. ԵՐՐԵՐԴ ՇՐՋԱԾՎ ԿԱՄ ԳԱԶԵՐԻ ՂԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԾՎ

Այս շրջանի ընթացքում վառողային գագերը փողի միջից դուրս են գալիս 1200-2000 մ/վ արագությամբ, շարունակում են ազդել գնդակի վրա և նրան լրացուցիչ արագություն են հաղորդում: Գնդակի առավելագույն արագությունը հասնում է երրորդ

ժամանակաշրջանի վերջում, երբ մի քանի տասնյակ սանտիմետրեր հեռանում է փողաբերանից: Այս շրջանը վերջանում է այն ժամանակ, երբ վառողային գագերի ճնշումը դեպի գնդակի հատակը հավասարակշռվում է օդի դիմադրությանը:

3.2 ԱՐՏԱՋԻՆ ԲՈԼԻՍԻԿԱՆ

Սա գիտություն է, որն ուսումնասիրում է գնդակի շաժումը այն բանից հետո, երբ ավարտվում նրա վրա վառողային գագերի ազդեցությունը: Հրացանի փողի ներսից դուրս թռչելով վառողային գագերի ազդեցության տակ՝ գնդակը շարժվում է իներցիայով: Նետագիծ կոչվում է այն գիծը, որը ներկայացնում է գնդակի ծանրության կենտրոնը թրիչքի ժամանակ: Օդում գնդակը ենթարկվում է երկու ուժերի ազդեցության՝ ծանրության և օդի դիմադրության ուժերի: Ծանրության ուժը ստիպում է գնդակին աստիճանաբար իջնել, իսկ օդի դիմադրության ուժը անընդհատ դանդաղեցնում է գնդակի շարժումը և ձգում է ցած գծել նրան: Այս ուժերի ազդեցության հետևանքով գնդակի արագությունը աստիճանաբար փոքրանում է, իսկ նրա անցած հետագիծը հրենից ներկայացնում է ոչ հավասարաչափ կորագիծ: Գնդակի թրիչքին օդի դիմադրությունը արտահայտվում է նրանում, որ օդը հրենից ներկայացնում է սեղմված զանգված, և օդի միջով անցնելու ժամանակ գնդակը ծախսում է բավականին էներգիա: Օդի դիմադրողականության ուժը առաջանում է երեք հիմնական պատճառներից՝ օդի շփումից, մորլկացման առաջացումից, բալիստիկական ալիքի առաջացումից: Օդի որոշ մասերը, որոնք շփում են շարժվող գնդակի հետ, առաջանում են շփում և փոքրացնում են գնդակի թրիչքի արագությունը: Գնդակի մակերևույթի մոտ գտնվող օդի շերտը, որում մասնիկների շարժումը փոփոխվում է գնդակի արագությունից մինչև զրո, անվանում են սահմանային շերտ: Այս օդի շերտը պոկվում է գնդակի մակերևույթից, բայց չի հասցնում դիացել նրա հատակի մասին: Եվ գնդակի հատակի մասի հետևում առաջանում է նոսրացած տարածություն, որի հետևանքով առաջանում է գնդակի գլխիկային մասի և հատակի մասի ճնշումների տարբերություն: Այս տարբերությունը առաջանում է մի ուժ, որն ուղղված է գնդակի շարժմանը հակառակ և փոքրացնում է գնդակի թրիչքի արագությունը: Օդի մասնիկները, ձգտելով լրացնել նոսրությունը,

որն առաջացել է գնդակի հետևում, առաջացնում են մրրկացում¹: Թռիչքի ժամանակ գնդակը բախվում է օդի մասնիկներին, ստիպում է նրանց տատանվել: Դրա հետևանքով գնդակի առջկի մասում՝ գլխիկային մասում, մեծանում է օդի խտությունը և առաջանում են ձայնային ալիքներ: Դրա համար էլ գնդակի թռիչքը ուղեկցվում է յուրատեսակ ձայնով: Եթե գնդակի թռիչքի արագությունը փոքր է ձայնի արագությունից, ապա ձայնային ալիքները փոքր ազդեցություն են ունենում թռիչքի վրա, քանի որ ձայնային ալիքները արագ են տարածվում: Իսկ եթե գնդակի արագությունը մեծ է ձայնի արագությունից, ապա առաջանում է ուժեղ խտացված օդի ալիք, որը կոչվում է **բալիստիկական ալիք**: Այն դանդաղեցնում է գնդակի թռիչքի արագությունը, քանի որ գնդակը իր եներգիայի մի մասը ծախսում է այդ ալիքի առաջացման վրա:

Համազոր բոլոր ուժերը, որոնք առաջացել են գնդակի թռիչքի վրա օդի ազդեցության հետևանքով, կազմում են օդի դիմադրության ուժեր: Օդի դիմադրության ուժերի կիրառման կետը կոչվում է **դիմադրության կենտրոն**: Օդի դիմադրության ուժերի ազդեցությունը գնդակի թռիչքի վրա շատ մեծ է: Այդ ուժերը փոքրացնում են գնդակի ազդեցությունը և թռիչքի հեռավորությունը: Օրինակ՝ 1930 թ.-ին ստեղծված գնդակը, երբ նետման անկյունը 15° է, սկզբնական արագությունը 800 մ/վրկ է, անոր տարածության մեջ կազմում է 32620 մ: Այդ գնդակի թռիչքի հեռավորությունը նույն հանգանանքներում, բայց արդեն օդի դիմադրության առկայության դեպքում, կազմում է 3900 մ: Օդի դիմադրության ուժը մեծանում է գնդակի տրամաչափի, գնդակի թռիչքի արագության, օդի խտության մեծացման հետ: Գնդակի թռիչքը գերձայնային արագությունների դեպքում, երբ օդի դիմադրության հիմնական ուժը առաջացնում է բալիստիկ ալիք, նախընտրելի է իրականացնել այն գնդակներով, որոնք ունեն սրածայր երկար գլխիկներ:

Որքան հարթ է գնդակի մակերևությը, այնքան փոքր է շիման ուժը և փոքր է օդի դիմադրության ուժը: Ժանանակակից գնդակների տարրեր ծները նրա համար են, որպեսզի փոքրացնեն օդի դիմադրության ուժը:

Սկզբնական հրամանի ազդեցության տակ, այն պահին, երբ գնդակը փողից դուրս է թռչում, գնդակի առանցքի և անցած

¹ մրրկացում- օդի հոսքի ուժեղ պտույտ, մրրիկի, քամու պես:

ճանապարհի միջև առաջանում է անկյուն, և օդի դիմադրության ուժը ազդում է ոչ թե գնդակի առանցքի երկարության վրա, այլ այդ անկյան տակ: Այդ ուժը ձգտում է ոչ միայն դանդաղեցնել գնդակի արագությունը, այլև կանգնեցնել նրան: Դրա համար էլ, որպեսզի գնդակը այդ ուժի ազդեցության տակ գետին չընկնի, փողի մեջ եղած պտուտակավոր ակոսների միջոցով գնդակը մինչ փողից դուրս գալը կատարում է պտտողական շարժումներ: Օրինակ՝ Կալաշնիկովի ավտոմատից կրակելու դեպքում գնդակի պտտողական արագությունը փողից դուրս թռչելու պահին հավասար է մոտավորապես 3000 պտույտի 1 վայրկյանում: Պտտվող գնդակի թռիչքի ընթացքում օդում տեղի են ունենում հետևյալ երևույթները: Օդի դիմադրության ուժը ձգտում է գնդակին շրջել գլխիկային մասով դեպի վերև և հետ: Բայց գնդակի գլխիկային մասը արագ պտտվելու հետևանքով աշխատում է պահպանել իր դիրքը և թերվել ոչ թե վերև, այլ գրեթե աննշան թերվել իր պտտման կողմը՝ ուղղի անկյան տակ, օդի դիմադրության ուժի ուղղությամբ, այսինքն՝ դեպի աջ: Յենց որ գնդակի գլխիկային մասը թերվելու հետո դեպի աջ փոփոխվում է նաև օդի դիմադրության ուժը: Նա ձգտում է գնդակի գլխիկային մասը շրջել աջ և հետ, բայց գլխիկային մասը հետադարձ է կատարում ոչ թե դեպի աջ, այլ ներքև: Քանի որ օդի դիմադրության ուժը ազդում է անընդհատ, իսկ նրա ուղղությունը փոփոխվում է գնդակի առանցքի թեքման հետ, ապա գնդակի գլխիկային մասը նկարագրում է շոշապատը, իսկ նրա առանցքը՝ ծանրությունը: Տեղի է ունենում, այսպես կոչված, դանդաղ ավարտվող կամ շարունակական շարժում, և այդ դեպքում գնդակը կրոչի գլխիկային մասով առաջ: Գնդակը դանդաղ, ավարտվող շարժումնով օդի հոսքի հետ թերվում է պտտման կողմը և այս թերվումը կոչվում է շեղում: Այսպիսով՝ շեղման պատճառ են դառնում գնդակի պտտողական շարժումը, օդի դիմադրությունը և ծանրության ուժի ազդեցության տակ գնդակի ցածրանալը: Այս պատճառներից թեկուզ մեկի բացակայության դեպքում շեղում չի լինի: Յրածգության այսուսակներում տրվում են շեղումների շտկան հազարավոր ուղղություններ: Բայց մարտական գենքով հրաձգության դեպքում շեղումի մեծությունը աննշան է (օրինակ 500 մ վրա այն չի անցնում $0,1$ հազարերրորդականից) և նրա ազդեցության արդյունքների վրա գրեթե աննշան է:

Գնդակի հետագիծը ուսումնասիրելու համար ընդունված են հետևյալ սահմանները: Փողաբերամի կտրվածքի կենտրոնը կոչվում է **թռիչքի կետ**: Թռիչքի կետը հանդիսանում է գնդակի հե-

տագիր սկիզբ: Հորիզոնական հարթությունը, որն անցնում է թռիչքի կետով, կոչվում է **զենքի հորիզոն**: Ուղիղ գիծը, որը փողի առանցքի շարունակությունն է, կոչվում է **բարձրացման գիծ**: Ուղղահայաց հարթությունը, որն անցնում է բարձրացման գիծի միջով, կոչվում է **հրաձգության հարթություն**: Այն անկյունը, որը կազմվում է բարձրության գծով և զենքի հորիզոնով, կոչվում է **բարձրացման անկյուն**: Եթե այդ անկյունը բացասական է, ապա այն կոչվում է **իջեցման անկյուն**: Այն ուղիղ գիծը, որը փողի առանցքի շարունակությունն է գնդակի թռիչքի պահին, կոչվում է **նետման գիծ**: Այն անկյունը, որը կազմվում է նետման գիծի և զենքի հորիզոնի միջոցով, կոչվում է **նետման անկյուն**: Այն անկյունը, որը կազմվում է բարձրացման գիծի և նետման գիծի միջոցով, կոչվում է **թռիչքի անկյուն**: Այն կետը, որ հատում է հետագիծը զենքի հորիզոնի հետ, կոչվում է **անկման կետ**: Այն անկյունը, որը կազմվում է անկման կետի և զենքի հորիզոնի միջև, կոչվում է **անկման անկյուն**: Թռիչքի գիծը, որը փողի առանցքի շարունակությունն է գնդակի թռիչքի պահին, կոչվում է **նետման գիծ**: Այն անկյունը, որը կազմվում է նետման գիծի և զենքի հորիզոնի միջոցով, կոչվում է **թռիչքի անկյուն**: Գնդակի թռիչքի արագությունը անկման կետում կոչվում է **վերջնական արագություն**: Գնդակի շարժման ժամանակը թռիչքի կետից մինչև անկման կետը կոչվում է **թռիչքի լրիվ ժամանակ**: Գնդակի հետագիտ ամենաբարձր կետը կոչվում է **հետագի բարձունք**: Հետագի բարձունքից մինչև հորիզոնը ընկած ամենակարծ տարածությունը կոչվում է **հետագի բարձրություն**: Հետագի այն մասը, որը ընկած է թռիչքի կետից մինչև բարձունք կոչվում է **հետագի վերջնարաց ճյուղ**: Հետագի վերջնարաց ճյուղ կոչվում է այն մասը, որն ընկած է **գագաթից մինչև անկման կետը**: Նշանակետը կամ նրանից դուրս կետը, որին ուղղված է զենքը կոչվում է **նշանառության կետ**: Հրաձգի աչքից մինչև նշանառության կորուսքի մեջտեղը անցնող գիծը կոչվում է **նշանառության գիծ**: Բարձրության գիծի և նշանառության գիծի կազմած անկյունը կոչվում է **նշանառության անկյուն**: Նշանառության գիծը զենքի հորիզոնի հետ կազմում է անկյուն, որը կոչվում է նշանակետի տեղի անկյուն: Այդ անկյունը դրական է կոչվում, եթե նշանակետը բարձր է զենքի հորիզոնից: Եվ անկյունը բացասական է կոչվում, եթե նշանակետը ցածր է զենքի հորիզոնից: Այս անկյունը որոշվում է սարքերի օգնությամբ կամ հազարնոցի բանաձևով.

$$E = \underline{B} \times 100$$

D

E - նշանակետի տեղի անկյունն է հազարանոցում.

B - նշանակետի բարձրությունը, մետրերով գենքի հորիզոնի վերևում:

D - հրաձգության հեռավորությունը մետրերով:

Թռիչքի կետից մինչև անցած ճանապարհը կոչվում է նշանառու հեռավորություն: Ամենակարծ տարածությունը հետագի ցամկացած կետից մինչև նշանառության գիծը կոչվում է **հետագի բարձրացում նշանառության գիծի նկատմամբ**: Ուղիղ գիծը, որը միացնում է թռիչքի կետը նշանակետը հետ, կոչվում է **նշանակետի գիծ**: Թռիչքի գիծից մինչև նշանակետը ընկած տարածությունը կոչվում է **թերության հեռավորություն**: Այն կետը, որը հատում է հետագի նշանակետի վերկի մասով, կոչվում է **համդիպման կետ**:

Այն անկյունը, որը առաջանում է գնդակի հետագի շոշափողի և նշանառության մակերևույթի շոշափողի հանդիպման կետում, կոչվում է **համդիպման անկյուն**: Գնդակի հետագի օդում ունի հետևյալ հատկանիշները՝ վարդներաց ճյուղը ավելի կոր է վերընթացից, անկման անկյունը ավելի մեծ է նետման անկյունից, գնդակի վերջնական արագությունը փոքր է նախնական արագությունից:

3.3 Գնդակի սկզբնական արագությունը

Գնդակի սկզբնական արագությունը նշվում է մարտական գենքի բնութագրության մեջ: Եթե մեծանում է գնդակի սկզբնական արագությունը, մեծանում է նաև գնդակի թռիչքի հեռավորությունը, գնդակի մահացու ազդեցությունը, ինչպես նաև փոքրանում է արտաքին ազդակների ազդեցությունը նրա թռիչքի վրա:

Գնդակի սկզբնական արագության մեծությունը կապված է փողի երկարությունից, գնդակի քաշից, վառողային լիցքի շերմաստիճանից և խոնավությունից, վառողի հատիկների ձևից, չափից, լիցքավորման խտությունից: Որքան երկար է փողը, այնքան շատ են գնդակի վրա ազդում վառողային գագերը և այնքան մեծ է սկզբնական արագությունը: Փողի հաստատուն երկարության և վառողային լիցքի հաստատուն քաշի դեպքում սկզբնական արագությունը որքան մեծ է, այնքան փոքր է գնդակի քաշը: Վառողային լիցքի քաշի մեծացման հետ մեծանում է նաև վառողային գագերի քանակը, հետևաբար և մեծանում է առավելագույն ճնշումը փողի մեջ և մեծանում է գնդակի սկզբնական արագությունը: Իսկ փողի երկարությունը և վառողի լիցքի քաշը ավելանում է և հասնում է մինչև ամենաշատ ռացիոնալ չափերի

գենքի նախագծնան պահից սկսած: Երբ մեծանում է վառողային լիցքի շերմաստիճանը, մեծանում է նաև վառողի այրման արագությունը, դրա համար էլ նեշանում է՝ առավելագույն ճնշումը, և՝ սկզբնական արագությունը: Լիցքի շերմաստիճանի անկման դեպքում սկզբնական արագությունը փոքրանում է: Վառողի լիցքի խոնավության բարձրացման դեպքում փոքրանում են այրման արագությունը և գնդակի սկզբնական արագությունը: Վառողի ծևը և չափերը ցուցաբերում են էական ազդեցություն վառողային լիցքի այրման արագության վրա և, բնականաբար, ազդում են նաև գնդակի սկզբնական արագության վրա: Նրանք ընտրվում են համապատասխան կերպով գենքի նախապատրաստման ժամանակ:

ԳԼՈՒԽ 4 ՍՊՈՐՏԱՅԻՆ ԶԵՆՔԵՐ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՁՆԵՐ

Հրաձգության մեջ մեծ քանակի սպորտային վարժությունների առկայությունը բերել է նրան, որ ստեղծվել են սպորտային գենքի նոր տեսակներ, որոնք բավարարում են հրաձգային վարժությունների յուրահատուկ պահանջներին: Պահանջներ ասելով՝ պետք է հասկանալ այն սահմանափակումները, որոնք առաջանում են գենքի նոր տեսակների նախագծնան և նրան ընտելանալու ժամանակ: Հրազենային հրաձգության ժամանակ օգտագործում են մեկ փողանի գենք, քանի որ այն իր կառուցվածքով և շահագորշմանը ամենապարզն է: Կախված այն բանից, թե որքան փամփուշտ է տեղավորվում գենքի մեջ, և առանց լրացրցից մատակարարման այն որքանով է ապահովում հրաձգությունը, տարբերվում են մեկանգամյա լիցքավորման և բազմալիցքավորման գենքեր: Նշված երկու գենքերն ել լայնորեն օգտագործվում են հրաձգային սպորտում վարժություններ կատարելու համար: Զենքի կոնստրուկտորները մեծ ուշադրություն են դարձնում գենքի գլխավոր դետալի՝ փողի կառուցման տեխնոլոգիային:

Մեծ ուշադրություն են դարձնում զգանին, նրա մուտքին, գենքի կիրառմանը, որը կախված է հրաձգի անհատական առանձնահատկությունից: Արագացված հրաձգության ժամանակ սովորաբար օգտագործում են պահեստատուփով գենքը: Սովորաբար հիմնային մոդելները բավարարում են ժամանակակից պահանջներին երկար ժամանակ, բայց առանձին մասերի կառուցվածքի կատարելագործումից հետո հայտնվում են նույն գենքի նոր մոդելներ, նույն անունով, բայց նոր ցուցանիշներով, օրինակ՝ «Ուրալ», «Ուրալ-2», «Ուրալ-5», «Ուրալ-6» և այլն: Եթե նույն մոդելը օգտագործվում է ուրիշ փամփուշտներով, գենքը նորից նոր անուն է ստանում, օրինակ՝ «Թայֆուն-1» գենքը օգտագործում է 7,6 մմ տրամաչափի հրացանային փամփուշտ, իսկ «Թայֆուն-3»-ը՝ 5,6 մմ տրամաչափի փամփուշտ:

Զենքի նշանառության հարմարանքը տարբեր սարքերի միջոցով պետք է օժանդակի, որ փոփոխություններ մտնեն հրաձգության պայմանների մեջ: Ներկայումս հրացանով հրաձգության մեջ ամենատարածված նշանառության հարմարանքն է համարվում բաց և դիօպտրական նշանացույցը՝ իր փոփոխական նշանաձողիկով, դիօպտրներով ու նշանառության հատիկով: Անդանակով հրաձգության ժամանակ օգտագործում են բաց

Նշանոցները¹: Զենքի խնամքը, նրա ոչ լոիվ քանդումը պետք է լինի արագ և դրա համար չպահանջի հատուկ գործիք:

Հրազենային հրաձգության մեջ օգտագործվում են հետևյալ հրացանները՝

1. **Փոքր տրամաչափի (կամավոր և ստանդարտ)**:

2. **Խոշոր տրամաչափի (կամավոր և ստանդարտ)**:

3. **Օդամղիչ**:

Բոլոր տիպի հրացանների համար արգելվում են՝

- փողային արգելակներ, նշանառությունը կանոնավորող լինզամեր, որոնք ամրացված են գենքին կամ նշանառության հարմարանքին (հրաձգիք կարող է դնել կանոնավորող ակնոցներ): Թույլատրվում է օգտագործել լուսային ֆիլտրեր, որոնք ամրացված են դրոշապատյանին կամ նշանոցին:

4.1 Փոքր և խոշոր տրամաչափի գենքեր

Փոքր և խոշոր տրամաչափի գենքերի մեջ են մտնում ԶԿի-12, ԶԿի-8-Ծ, հԾ-2 մարտական հրացանները, սպորտային ատրճանակները, ինչպես նաև օդամղիչ գենքերը: ԶԿի-8-Ծ հրացանի տրամաչափը 5,6 մմ է, ընդհանուր երկարությունը 1113 մմ է, քաշը 3,12 կգ, ունի բաց նշանառություն՝ 2 մմ մինչև 0 մմ հեռավորության վրա կրակոցների բաժանումներով:

ԶԿի-12 հրացանի կառուցվածքը տարբերվում է ԶԿի-8-Ծ հրացանի կառուցվածքից նրանով, որ փողակալը ավելի երկար է, և այն ունի դիօպտրական նշանացույց:

Մարզական փոքր տրամաչափի հրացան հԾ-2: Այս գենքը նախատեսված է 50 մ տարածության վրա կրակելու համար և կազմված է հետևյալ հավաքման միավորներից փող, փողատուփ, փակաղակ, ձգանային մեխանիզմ, նշանառության հարմարանք, ագուստ /ագուստը հրացանի փայտի մասին է, որին միացած է փողը:

ՓՈՂԸ: Փողը ծառայում է գնդակի թոշքը ուղղորդելուն: Նրա ներսում կա միջանցիկ անցք՝ իր վեց ձախից աջ պտտվող ակոսներով՝ երկայնական առանցքի շուրջը գնդակին պտտեցնող շարժումներ տալու համար: Այդ ակոսների միջև եղած տարածությունը կոչվում է դաշտեր: Յակռակ դաշտերի միջև եղած տարածությունը որոշվում է գենքի տրամաչափը: Փողի առաջա-

¹ Նշանոց-նշան բռնելու հարմարանք

մասը կոչվում է փողաբերանային, իսկ ետևի մասը՝ լցամաս: Փողի կտրվածքային մասը՝ վեց կլորածև ակոսներով (արանքներով) միանում է փանփշտանոցին փանփուշտի մուտքով: Փողաբերանին ամրացված է նշանառության հատիկի հիմքը: Փողի լցամասը ամրացված է փողատուփի բնիկին և կրկնակի ֆիքսվում է սեպով (անշարժացնելու համար): Լցամասի կողաձակատում գտնվում է երկու կտրվածք՝ աջ և ձախ կողմերում: Աջը՝ նետիչի ատամի համար, իսկ ձախը՝ փանփշտահանի ատամի համար: Նշանառության հատիկի հիմքը իրենից ներկայացնում է երկու փողակ (փոքրիկ խողովակ)՝ միավորված միջնապատով: Վերևուրից արված է լայնակի բացվածքը փոխսովի նշանառության հատիկի համար: Վերին փողակի առջևում կա պարուրակ, որի միջոցով ամրացված է նշանառության հատիկը:

ՓՈՂԱՏՈՒՓ: Այն ծառայում է փակաղակի տեղափոխման համար, որը ներսում ունի կենտրոնական գլանածև փողանցք փակաղի շարժման համար, իսկ առջևում բնիկ, որը միացնում է փողատուփը գենքի փողին: Փողատուփի ներքեւի հարթության վրա կա փորվածք՝ փողը փողատուփի հետ ագուստի մեջ ավելի պինդ տեղափորելու համար, որը ապահովում է հրաձգության ավելի կայուն կենտրոնացվածությունը: Փողատուփի մեջ՝ միացնող պտուսակների տակ, կամ երկու պարուրածև անցրել: Փողատուփի ձախ կողմում գտնվում է «ծիծեռնակի պոչի» նման ելուստ՝ նշանառության հարմարանքի տեղադրման համար, իսկ վերևում՝ աջից, տեղափորված է պատուհան լիցքավորման և պարկութիղուրս նետման համար: Փողատուփի կտրվածքի հորիզոնական մասի հարթությունը հանդիսանում է մարտական հենարան՝ փողատուփում տեղադրված արկղիկի: Արկղիկի փորվածքի հետնամասում կա կտրվածք, որը նախատեսված է ձգանի մուտքի համար: Կա նաև ելուստ՝ պարկութիղ հետադարձնող: Արկղիկը փողային տուփին ամրացված է պտուտակով:

ՓՄԿԱԴԿ: Այն նախատեսված է փանփշտանոց տեղակիություն կառավագանության համար, փողանցքի փակման համար, կրակոցի արտադրման համար և փանփշտանոցից պարկութիղ /փանփուշտի/ դուրս հանման համար: Փողանցքի փակումը իրականանում է երկայնասահառ փակաղակով, երբ նրա շրջանակը պտտվում է: Յակաքած փակաղակը կազմված է սեփական փակաղակից, որի վրա հարմարեցված է նետիչը փանփշտահանից, փակաղակային շրջանակից, որի վրա հարմարեցված է կիսականական փակաղակի առջևում՝ աջից, ձախից և վերևում տեղափորված է մարտական զսպանակի հրահանը: Կիսագլանածև փակաղի առջևի մասում՝ աջից, ձախից և վերևում կա նեղ երկայնակի արանքներ՝

փանփշտահանը զսպանակային նետիչի և թիթեղավոր զարկանի հետ համապատասխանաբար տեղավորելու համար: Փակաղակի առջևանասի ներքելի հարթությունը ելուստի հետ հանդիսանալով փանփշտի տեղամդիչ՝ ապահովում է շարժման ուղղությունը արկդիկի երկարությամբ: Փակաղակի առջևի կողահարթակին գտնվում է անցքով գլանային խորություն՝ զարկանի խփիչի անցման համար:

Փակաղակի ետնամասը իրենից ներկայացնում է փողակ (փոքր խողովակ) և ունի միջանցիկ ուղղահայաց կտրվածք՝ հրահանի գլխիկի անցման համար, և երկու արտաքին ելուստները՝ փակաղակային շրջանակին միացնելու համար:

ՓԱԿԱՂԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ: Այն իրենից ներկայացնում է հատակով փողակ և վերալիցքավորման բանատեղ: Բանատեղի հիմք հանդիսանում է մարտական հենարանը: Փակման պահին բռնատեղի հիմքը մտնում է փողատուփի կտրվածքի մեջ: Փողակի տակ կա ոչ մեծ անցք, որը նախատեսված է հրահանի պոչի անցումի համար, ինչպես նաև ծառայում է նրա՝ հրահանի պոչով ուղղորդմանը: Շրջանակի առջևի մասի ներսում գտնվում են երկու կիսակլոր փորվածքներով կետեր-անցքեր՝ փակաղակի ելուստների անցման համար: Շրջանակի վերևում հարմարացված է կտրվածք, որը նախատեսված է փակաղակի քանդման ժամանակ հրահանի դուրս գալու համար: Փակաղակային շրջանակի ներքելում կա հրահանը քաշելու համար ձևավոր պատուհան պարույրով:

ԶԱՐԿԱՆ: Զարկանը իրենից ներկայացնում է հարթ թիթեղաշերտ՝ փակաղակին սեպերով ամրացնելու համար նախատեսված երկու կիսագլանային կտրվածքներով: Նա ամրանում է այնպես, որ հնարավորություն ունենա երկայնակի տեղափոխվելու հարահանի հրավածից հետո: Զարկանի ներքելի մասի առաջանասն ունի հատուկ ձև, որը և խփիչի դեր է կատարում:

ԴՐՈՒՅՆ: Այն ուղղանկյունաձև գլխիկ ունեցող գլանային ձող է, որի վրա կա երկու ելուստ՝ վերևում և ներքևում: Վերևի ելուստը գտնվում է գլխիկի առջևում և նախատեսված է զարկանի հարվածի տակ հրահանի մուտքի սահմանափակման համար: Ներքելի ելուստը նախատեսված է հրահանը քաշելու համար, երբ նրան մարտական ոտքի վրա են կանգնեցնում:

Դրահանի գլանային մասում հագցվում է մարտական զսպանակը: Դրահանի ետևի վերջավորությունը (պոչը) դուրս է գալիս շրջանակի արանքը և ազդանշանում է հրահանի քաշելու մասին:

ՆԵՏԻՉՈՒԹՅՈՒՆ: Սա կենտրոնում արանքով հարթ երկրագուկ լծակ է: Նրա առջևի մասում կա ատամ, որը ամրացնում է առջևի մասը պարկում եղրին, իսկ հետևի մասը հարթակ է, որի վրա ազդում է նետիչի զսպանակը: Նետիչի զսպանակի ազդեցության տակ նետիչի ատամը մշտապես սեղմվում է փակաղակի թասին և պահում է պարկումը մինչև նրա հետ մղելը:

ՓՄՄՓԾՏԱՆԴԱԿ: Այն ձևով մոտ է նետիչին, բայց նրա առջևի մասը ավելի քիչ է սուր: Իր զսպանակի ազդեցության տակ փանփշտահանը սեղմվում է փակաղակի թասին և նա էլ իր հերթին լրացնում է պահում և պարկում, իսկ հետման ժամանակ նրան ապահովում է ուղղորդված և ճիշտ թորիք փողատուփից:

ԶԳԱՆԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԳՄ: Զգանային մեխանիզմը ազատում է զարկանը ձգանի ամրացումից կարգավորիչ պտուտակների միջոցով: Զգանային մեխանիզմի կորպուսը իրենից ներկայացնում է ձուլված տուփ, որի հատակին պտուտակաձգված է ուժեցնող պտուտակը: Նրա վերևի մասում գտնվում է սեպի և ձգանային կերիկի առանցքի համար անցք, իսկ ներքին մասում գտնվում է անցք՝ ձգանային կերիկի առանցքի համար, մեծ անցք՝ կերիկը ձգանին հարմարեցնելով ամրացնելու համար և փորվածք՝ կերիկը անցնելու համար:

ԶԳԱՆ: Զգանը նույնպես եռարագուկ լծակ է, որը ամրացված է առանցքին և իր զսպանակի ազդեցության տակ ձգտում է ետ դարձնել և բաց թողնել հրահանը: Առջևի բազուկի հարթությունը հանդիսանում է սեփական ձգան և համագրոժակցում է մարտական ոտքի հրահանի հետ, իսկ առջևի հարթությունը կատարում է փակաղակային պահիչի դեր: Զգանի հետևի բազուկը ծառայում է ձգանը դուրս հանելու համար, ինչպես փակաղակի պահիչը, փակաղակը ամրացնելու համար: Ներքին բազուկը հանդիսանում է իբրև ձգանի ոտք և պահվում է ձգանային կերիկի բազուկով: Կարգավորիչ պտուտակները ունեն երկայնակի բացվածքներ, իսկ նրանց պտտման հարմարության համար ունեն գամահանիչ անցքեր:

ՆՇԱՆԱՊՈՒԹՅԱՆ ԴԱՐՄԱՐԱՆ: Այս հարմարանքը ծառայում է հրացանը նպատակին նշանառելու համար: Նա կազմված է նշանոցից և նշանառության հատիկից: Հրացանի կրակոցի ժամանակ, որպես կանոն, օգտագործվում է դիօպտրական նշանառություն, որն ունի փոքրիկ, կլոր անցքեր՝ դիօպտրներ: Այդ դիօպտրները նշանառության հատիկը թիրախի տակ ուղղելու համար:

Նշանոցի հիմքը առջևի մասում ունի բնիկ սեղմիչի համար, որի օգնությամբ նշանոցը ամրացվում է փողատուփի ծախ ելուստի վրա, իսկ հետևի մասում ունի մեծ ելուստ՝ «ծիծեռնակի պոչի» նման ուղղահայաց դիրքով եռանկյունին տեղափորելու համար: Անկյունի վրա՝ վերևից, տեղափորված է ուղղահայաց ուղղումների համար նախատեսված պտուտակը՝ թմբուկով և կասեցուցիչով /ստոպոռով/, իսկ առջևից՝ հորիզոնական ուղղումների պտուտակը՝ իր թմբուկով: Անկյունի ուղղորդիչ կտրվածքում՝ պտուտակի վրա, տեղափորված է դիօպտրի հիմքը: Դիօպտրի հիմքը ունի երկայնապարուրային անցք փոփոխական դիօպտրների տեղադրման համար: Տեղադրված է նաև ուղղանկյուն ակոս հիմքի շարժումը ուղղորդելու համար և լայնակի-պարուրային անցք, որը գտնվում է հորիզոնական ուղղումների պտուտակի տակ:

ԴԻՕՊՏՐ: Ծատ պայծառ լուսավորության դեպքում խորհուրդ է տրվում կրակոցները անցկացնել 1,0մ-1,2 մմ դիօպտրով: Ամպամած եղանակներին, թիզ լուսավորության դեպքում անհրաժեշտ է մեծացնել դիօպտրի դիամետրը: Նշանառության հատիկը ամրացված է դրոշապատճանին: Դրոշապատճանը չի թողնում, որ նշանառության հատիկը վճասվի, ինչպես նաև պահպանում է փոշուց և արևի պայծառ լույսից: Յրագործության մեջ օգտագործվում է նշանառության հատիկի առավել տարածված երկու ձև՝ ուղղանկյուն և օղակաձև: Ուղղանկյուն նշանառության հատիկի լայնությունը, պետք է մոտավորապես հավասար լինի թիրախի լայնությանը և կարող է տատանվել մինչև 1,8 մմ-ից-2,2 մմ: Օղակաձև նշանառության հատիկով նշանառության ժամանակ թիրախը գտնվում է նշանառության հատիկի օղակի կենտրոնում: Թիրախի և նշանառության հատիկի միջև եղած լուսանցքը վերահսկվում է նշանառության հատիկի ամբողջ դիամետրով մեկ: Մրանում է օղակաձև նշանառության հատիկի առավելությունը: Եթե, օրինակ, ներքևից և ձախից նեղանում է լուսանցքը, ապա վերևից կամ աջից այդքան անգամ էլ մեծանում է այն: Բացի գործարանային մետայա օղակաձև նշանառության հատիկից, կիրառվում է նաև իրենց՝ մարզիկների կողմնից թափանցիկ դեղին, վարդագույն թիթեղներով պատրաստված նշանառության հատիկի տեսակները: Օղակի մեծությունը կախված է մարզիկի որակավորումից և թիրախի լուսավորվածության մեծությունից և տատանվում է 3,2 մմ-ից մինչև 3,8 մմ: Դիօպտրական նշանառության դրական կողմն է համարվում այն, որ հնարավոր է կարգավորել դիօպտրից մինչև աչք եղած հեռավորությունը:

Զենքի տեղափոխման ժամանակ խորհուրդ է տրվում համել նշանառության հարմարանքը:

ԱԳՈՒՏ: Սա հրացանի փայտե մասն է, որը միացված է փողին, որը անհրաժեշտ է հրացանի բոլոր մասերի միացման համար, ինչպես նաև հրաձգությունը հարմար կատարելու համար: Յրացանի ագուտը միասնական է փողակալի, ատրճանակային վզիկի և երեսի կորունի հետ: Փողակալում գտնվում է տաշտակած փորվածք փողի տեղադրման համար և միջանցիկ պատուհաններով բնիկ, որտեղ տեղադրվում է փողասովուզ զգանային մեխանիզմի հետ: Փողակալի ներքից տեղադրված են երկու կտրվածքներ: Առաջին կտրվածքը կրակային գոտի-հենարանի զուակը շարժական փողակալի հետ տեղադրելու համար է, ինտեր կտրվածքում տեղադրված է և ամրապնդված պահպանական բռնակը: Կորունի հետին կողաճակատին երկու պտուտակով ամրացված է ծորակակալը:

4.2 Օդամղիչ զենքեր

Օդամղիչ ատրճանակով կրակոցները, կատարվում են 10 մ հեռավորությունից մինչև N9 թիրախի վրա: Զենքի տրամաչափը 4,5 մմ: Վարժությունների կատարման ժամանակը.

կկ-3 /60 ստուգարթային կրակաց/ -1 ժամ 45 րոպե
կկ-2 /40 ստուգարթային կրակաց/ -1 ժամ 15րոպե

Վարժությունները կատարելու ժամանակ օգտագործում են հայրենական արտադրության ատրճանակներ և L1 33 Ը, L1 46 ատրճանակ արևելագերմանական ֆիրմայի «Ֆայնվերբաու» մոդելի «65», «80», «90» սարքավորումներ /«Վալտեր», «Ֆաս-604»/ հանդիպում են եզակի ննուշներով: 1983թ. յրագործության միջազգային ֆեդերացիան որոշեց՝ օդամղիչ զենքով աշխարհի և Եվրոպայի մրցումները անցկացնել միայն փակ շինություններում:

Ցանկացած օդամղիչ հրացան կամ ատրճանակ գործում է օդի խոռությամբ կամ CO₂-ով: Օդամղիչ հրացանի քաշը իր հարմարանքով 5 կգ-ից ոչ ավելի է: Պահանջները նույնն են, ինչ ստանդարտ փոքր տրամաչափային հրացանները, բացառությամբ մաքսիմալ չափերինը՝ «ք-1», «ք-2», «Ժ», «Ժ» 10 մմ:

4.3 Փամփուշտի կառուցվածքը

Փամփուշտը բաղկացած է գնդակից, պարկուճից և վառողից:

ԳՆԴԱԿԱՆԵՐԸ: Գնդակները կարող են լինել տարբեր տրամաչափերի և բազմանույթ՝ կախված օգտագործման նպատակից: Ըստ կառուցվածքի՝ գնդակները լինում են՝ անպարուր, պարուրավորված, կիսապարուր և հատուկ գնդակներ:

1. Անպարուր գնդակները պատրաստված են բարձր տեսակարար կշիռ ունեցող և հեշտությամբ դեֆորմացվող նյութերից՝ արճճի և սուրսայի խառնուրդից: Նման գնդակները նախատեսված են փոքրտրամաչափային գնքերի (4.5 մմ-5.6 մմ) համար, որոնց արագությունը չի գերազանցում 400 մ/վրկ:

2. Պարուրավորված գնդակները պատրաստված են արճճով լցված մետաղաշապիկից, որի ներսում տեղադրված է մետաղյա միջուկ: Սրանք կարող են լինել տարբեր տրամաչափերի (5.6 մմ-7.6 մմ): Սկզբնական արագությունը մինչև 1050 մ/վրկ է:

3. Կիսապարուր գնդակները նախատեսված են հակառակորդին մեծ վնաս հասցնելու համար:

4. Նատուր գնդակները ունեն միջուկ, որը լցված է համապատասն նյութով՝ ցանկալի էֆեկտ ստանալու ամար: Օրինակ՝ դեղամիջոցներ, հրեհիվոր, լուս արձակող նյութերից, ինչպես նաև ռետինից, պլասմասայից և այլ նյութերից:

ՊՄՐԿՈՒԹ: Պարկուճը կարող է լինել զլանաձև և տարբեր չափերի՝ կախված վառողի անհրաժեշտ քանակից, քանի որ փամփուշտի պարկուճում է հենց լցված վառողը: Մարտական պարկուճները պատրաստվում են հիմնականում սուրգուտից:

ՊՄՏԻՇ: Պատիճը լինում է կենտրոնական կամ եզրային հարվածի համար նախատեսված: Ունի նիտրոգլիցիրինային կառուցվածք:

ՎԱՐՈՂ: Վառողը լինում է սև և սպիտակ: Սև վառողը ստացվում է 75 տոկոս սիլիստրայի, 10 տոկոս ծծումբի և 15 տոկոս ակտիվացված ածուխի խառնուրդներից: Խառնուրդը թրջում են սպիրտով, մամլում, որից հետո մամրացնում են և հավասարաչփ հատիկներ ստանալու նպատակով մաղում: Սև վառողի պարյունից առաջանում է 40 տոկոս գազ և 60 տոկոս կարծր մնացորդներ: Բոցավառումից առաջանում է 315° ջերմություն:

Սպիտակ վառողը կարող է լինել պիրօքսիլինային և նիտրոգլիցիրինային:

Պիրօքսիլինային վառողը ստանում է թաղանթանյութի վրա ազոտական և ծծմբական թթուներով ազդելու ճանապարհով:

Նիտրոգլիցիրինայինը ստանում են ազոտական և ծծմբական թթուներով մաքուր ջրագրկված գլիցիրինի վրա ազդելու եղանակով: Ստացվող թափանցիկ հեղուկը պայթունավտանգ է,

այդ պատճառով մաքուր վիճակում չի օգտագործվում: Ժամանակակից վառողը վերոհիշյալ երկուսի խառնուրդն է:

Օրինակ. անգլիական «Կորդիտ» վառողը պարունակում է 65 տոկոս պերօքսիլինային, 30 տոկոս նիտրոգլիցիրինային և 5 տոկոս վագելինային նյութ:

7,62 մմ տրամաչափի փամփուշտի լիցքը այրվելիս առաջացած գագերի ջերմությունը հանում է 32.00°C , ճնշումը փողի ներսում 1300-3000 կգ/սմ²: Գնդակի սկզբնական արագությունը 865 մ/վրկ: 1 կգ վառողը այրելիս առաջանում է 900 լ/գագ:

4.4.ԿԱԼԱԾՆԻԿՈՎԻ ԱՎՏՈՍԱ

Ավտոմատը գինվորի անհատական գենքն է: Այն օտագրծվում է հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու համար: Զերնամարտի համար ավտոմատին միացվում է սվին-դանակը: Ավտոմատից կրակում են սովորական (պողաստյա միջուկով), լուսացրող, գրահամերկիվող գնդակներ ունեցող փամփուշտներով: Յաձգությունը նրանով վարվում է կրակահերթ երեք կամ մենահար կրակոցներով: Յիմնական կրակը ավտոմատ կրակն է (կարծ 5 կրակոց և երկար մինչև 10 կրակոց): Ավտոմատի աշխատանքը հիմնված է փողանցքից դեպի փակաղի շրջանակի գագամից անցնող վառողի այրումից առաջացած գագերի եներգիայի օգտագործման վրա:

ԱՎՏՈՍԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ավտոմատի փողը նախատեսված է գնդակի թթիչքին ուղղություն տալու համար: Այն ունի փողանցք ձախից վերև դեպի աջ, ձկող ակոսներով: Ակոսները նախատեսված են գնդակին պտտական շարժում հաղործելու համար: Ակոսների միջև եղած տարածությունը կոչվում է դաշտ, իսկ երկու հակադիր դաշտերի միջև ընկած տարածությունը որոշում է փողի տրամաչափը: Փողի ետնամասում փողանցքը հարթ է, պարկուճածն: Այդ մասը կոչվում է փամփշտանոց: Անցումը փամփշտանոցից դեպի փողանցքի ակոսային մասը կոչվում է գնդակի նուտք: AK-74 ավտոմատն ունի փողաբերանային արգելակ: Այն ծառայում է խոցումների խտության բարձրացմանը և ետիարվածի եներգիայի պակասեցմանը: Փողաբերանի վրա փողը ունի պարուրակ: Փողի վրա են գտնվում նշանհատիկի հիմքը, գագամիցը, միացնող ագուստը, նշանոցի կոճղակը: Փողի ետնամասը կտրվածի վրա ունի կտրուք՝ պարկուճի

նետիչի կառաջանի¹ համար: Գազամոցը փողանցքի հետ հաղորդակցվում է գազատար անցքի միջոցով:

Փողատուփը նախատեված է ավտոմատի մասերն ու մեխանիզմները միացնելու, փակաղակով փողանցքը փակելու համար: Փողատուփում տեղադրվում է զարկանաձգանային մեխանիզմը: Փողատուփի կափարիչը պահպանում է նրա մեջ դրված մասերն ու մեխանիզմները կեղտոտվելուց:

Նշանառության հարմարանքը նախատեսված է տարբեր հեռավորության նշանակետորի վրա ավտոմատի նշանառության համար: Այն բարկացած է նշանանցից և նշանառության հատիկից: Նշանոցը կազմված է նշանոցի կոճղակից, թիթեղածև զսպանակից, նշանաձողիկից և անրիկից: Նշանաձողիկի վրա արված է բաժանաբաշումներ 1-ից մինչև 10-ը և «կ» նշանը: Նշանառության սանդղակի թվերը նշանակում են համապատասխան տարածություններ՝ հայրույրներով: «կ» նշանը համապատասխանում է նշանոցի մշտական, անփոփոխ դիրքին, որը միաժամանակ համապատասխանում է նշանոցի «3» բաժանումին: Մթության մեջ կրակելու համար օգտագործվում են ինքնալուսավորող ֆուֆորապատ գլխադիրներ (դրվում են նշանաձողիկի բաշիկի և նշանատիկի վրա), ինչպես նաև գիշերային նշանոցնր:

Նշահատիկը պտուտակված է սահաձողի մեջ, որն ամրացված է նշահատիկի հիմքին: Նշահատիկի հիմքի վրա գծանշված խագերի միջոցով ֆիքսվում է նշահատիկի դիրքը: Կոթը և ատրճանակային բռնակը նախատեսված են հրաձգության հարմարության համար:

Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը (փամփուշտը): Ցետադարձ մեխանիզմը նախատեսված է փակաղակի շրջանակը փակաղակի հետ միասին առջևի դիրք վերադարձնելու համար: Գազախողվակը փողի պահպանակով նախատեսված է գազամխոցի շարժմանն ուղղություն տալու և հրաձգության ժամանակ ձեռքերը այրվածքներից պաշտպանելու համար:

Զարկանաձգանային մեխանիզմը նախատեսված է հրահանի մարտական ոտքը կամ ինքնաթռիչքի ոտքը քաշելու, զարկանին հարված հասցնելու, ավոնատ կամ մենահար կրակոցներով կրակ վարելու, հրաձգությունը դադարեցնելու, փակաղակի չփակված լինելու դեպքում կրակոցը կանխելու և

ավտոմատը ապահովիչին դնելու համար: Փոխադրիչը ծառայում է ավտոմատը կրակահերթերով, մենահար կրակով կրակելու, ինչպես նաև ապահովիչի վրա դնելու համար:

Փողակալը նախատեսված է ավտոմատից հարմարավետ օգտվելու և ձեռքերը այրվածքներից պաշտպանելու համար: Սվին-դանակը գրոհից առաջ միացվում է ավտոմատին և ծառայում է հակառակորդին ձեռնամարտում ոչնչացնելու համար: Կարող է գործածվել նաև դանակ, սղոց (մետաղ սղոցելու) և մկրատ: Սվին-դանակը գրոհու վրա կրելու համար դրվում է պատյանի մեջ: Պահեստատուփը (փամփշտատուփը) նախատեսված է փամփուշտների տեղավորման և դրանք փողատուփ նտցնելու համար:

¹ Կառաջան նետիչը բռնելու հարմարանք, կեռ, կերիկ:

ԳԼՈՒԽ 5

ՄԱՐԶՈՒՄԵՐԻ ԵՎ ՌԱՍՈՒՄԱԿԱՆ ՊԱՐՄԱՊՈՒՆՔՆԵՐԻ ԶԵՆՔԵՐԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մարզական հրացանի կառուցվածքը ապահովում է անհրաժեշտ անվտանգությունը և հուսալիությունը հրաձգության ժամանակ, երբ հետևում են հետևյալ կանոններին:

1. Հրաձգության մարզածով բոլոր պարապողները պետք է իմանան և պահպանեն անվտանգության կանոնները զենքի և զինամթերքի հետ վերաբերվելու ժամանակ:

2. Մոցավարը կամ հրածիզը (պարապող) պարտավոր են դադարեցնել հրաձգությունը ցանկացած պահին, երբ տրվում է «Դադար» հրահանգը, եթե կրակագոտում հայտնվել են մարդիկ, կենդանիներ, կամ ստեղծվել է վտանգավոր իրավիճակ:

3. «Լիցքավորի՛ր» հրահանգից հետո միայն զենքը պետք է պահել թիրախի ուղղությամբ:

4. Բոլոր տեսակի հրացանները պետք է լիցքավորել միայն մեկ փամփուշտով, նույնիսկ եթե նրանք ունեն փամփշտատուի: 25 մ տարածության վրա հրաձգության ժամանակ ատրճանակները (ռևոլվեր) պետք է լիցքավորել 5 փամփուշտից ոչ ավելին:

5. Հրաձության պահին հրածիզը պետք է օգտվի միայն սարքին զենքից, որպեսզի բացառի ինքնաբեր կամ հանկարծակի կրակոցները:

6. Կրակագոտում գտնվող հրածիզը, եթե չի կատարում կրակոց, նրա զենքը պետք է լինի լիցքաթափակած, իսկ փակադակը բաց:

7. Կրակագոտու տարածքում զենքը պետք է գտնվի պատյանում կամ նրա համար նախատեսված արկղում:

8. Վարժության մեջ կատարելով վերջին կրակոցը՝ «Դադար» և «Լիցքաթերի» հրահանգներից հետո հրածիզը պետք է անմիջապես լիցքաթափի զենքը, բացի փակադակը և զենքը անմիջապես հանձնի մարզիչին կամ դատավորին ստուգելու համար:

9. Առանց փամփուշտի մարզումները պետք է անցկացվեն միայն կրակագոտում կամ դրանց անցկացնելու համար նախատեսված հատուկ տեղերում:

10. Արգելվում է զենքին ձեռք տալ կրակահերթի միջև եղած ընդմիջումների ժամանակ, երբ կրակագոտում գտնվում են մար-

դիկ: Արգելվում է նաև ձեռք տալ կամ վերցնել ուրիշի զենքը առանց նրա թույլտվության:

11. Խասիվ արգելվում է զենքը, նույնիսկ չլիցքավորված, բացի թիրախից որևէ այլ ուղղությամբ ուղղելը կամ հրաձգության սարքավորումներին կրակելը:

12. Զենքը և զինամթերքը պետք է միշտ լինի հսկողության տակ:

ԳԼՈՒԽ 6

ՄՊՈՐՏԱՅԻՆ ԴՐԱՋԳՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

6.1.ՄՏԵՆԴԱՅԻՆ ԴՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ

Ստենդը հրաձգարան է, որտեղ կրակում են թռչող ափսեների վրա: Գոյություն ունեցող վարժություններից օլիմպիական ծրագրում ընդգրկված են երկու վարժություններ՝ խրամտային ստենդ և կլոր ստենդ:

Խրամտային ստենդում ափսեներ նետող սարքավորումները տեղադրված են կրակագծից 15 մետր հեռավորության վրա գտնվող խրամտաներում, որի պատճառով էլ վարժությունը կոչվում է խրամտային: Վարժությունը կատարում են 200 թիրախների վրա 8 սերիա կրակոցով, յուրաքանչյուրում՝ 25 կրակոց: Կրակում են 3 օր: Առաջին և երկրորդ օրը 50 կրակոց: Թիրախի թրիչքի հեռավորությունը մինչև 30 մ է, ամենաբարձր կետը՝ 3.5 մ է: Դրացանը լիցքավորում են երկու փամփուշտով, առաջին անհաջող կրակոցից հետո կարելի է օգտագործել երկրորդը:

Կլոր ստենդ վարժության ժամանակ ստենդի հրապարակում տեղադրված են երկու տնակներ՝ ծախսից մեծ, իսկ աջից՝ փոքր, որտեղից էլ ափսեները հաջորդաբար դուրս են նետվում մինչև 70 մետր տարածության վրա, 4.5 մետր բարձրությամբ: Կրակում են մինյանցից հավասարաչափ հեռավորության վրա գտնվող, կիսաշրջան հիշեցնող 8 կրակակետերից հաջորդաբար: Վարժությունը կատարվում է 200 կրակոցով՝ յուրաքանչյուր թիրախի վրա օգտագործելով մեկ փամփուշտ: Այս վարժության ժամանակ էլ կրակում են երեք օր նույն սկզբունքով: Ստենդային հրաձգության թիրախները, համաձայն գործող կանոնադրության, պետք է ունենան 110 մմ տրամագիծ, բարձրությունը՝ 27 մմ, քաշը՝ 105-110 գրամ: Դրանք պատրաստվում են ցեմենտի, ածուխի և կավիճի հավասարաչափ խառնուրդներից: Ստենդային հրաձգությունում օգտագործվում են 12 տրամաչափի հարթ, ուղղահայաց մինյանց միացրած երկփողանի հրացաններ: Ստենդային հրաձգության վերը նշված երկու վարժությունների կատարման համար նախատեսված գենքերը մինյանցից տարբերվում են փողի երկարությամբ՝ 1-ինի դեպքում 750-760 մմ, քաշը՝ 3.8 կգ, իսկ կլոր ստենդի համար՝ 675 մմ, քաշը՝ 3.4 կգ:

6.2.ԳՄՂԱԿԱՅԻՆ ԴՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ (ՊԱՌԿԱԾ, ԾՆԿԱԾ ԵՎ ԿԱՆԳԱԱԾ ԴԻՔԵՐԻՑ)

Հրաձգի նախապատրաստումը տարվում է ընդունված հերթականությամբ (պառկած, ծնկած, կանգնած): Կարելի է հրածագության նախնական պատրաստությունը սկսել ծնկած և կանգնած դիրքերից՝ առանց պառկած դիրքից կրակելու նախնական ուսուցման: Յնարավոր են նաև ուսուցման գործահեռ և այլ տարրերակներ: Կրակելու տեխնիկայի ուսուցումը սկսվում է նախնական պատրաստականությունից: Նախապատրաստման վերջնական նպատակը մարմնի ճիշտ դիրքի ընտրությունն է, որի ժամանակ կապահովվի գենքի ճշգրիտ ուղղվածությունը և կայունությունը: Դրա համար առանձնահատուկ նշանակություն ունի՝
ա) տարածության մեջ՝ ուղղաձիգ և հորիզոնական լայնություններում, թիրախի ուղղությամբ ճիշտ կողմնորոշվելը.
բ) հենարանի ստեղծումը.
գ) մկանների լարման և բուլացման աստիճանը.
դ) գենքի և մարմնի մասերի փոխադարձ դիրքը, մարմնի մասերի ուղղությունը, հյուսվածքների շարժումների սահմանափակումը.
ե) հակագդեցությունը, որն առաջանում է ներքին ուժերի կողմից, մարմնի և գենքի երկարատև կայունության պահպանման համար.

գ) նրանց դասավորությունը համեմատաբար փոքր ցավային գգացողություններով:

ՊԱՌԿԱԾ ԴԻՔԵՐԻՑ ԿՐԱԿԵԼՈՒ ԴԱՍԱՐ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ցուցադրումը պետք է կսկի պառկած դիրքում զնքը առանց հենակի պահելուց: Նետու ծախ ծեռքի դաստակի տակ դրվում է հենակ (թեփով կամ ավազով լի պարկ, տրամագիծը՝ 15-30 սմ, երկարությունը՝ 25-45 մ):

Դիքավորման ժամանակ հարկավոր է, որ մարմնի և գենքի դիրքը չփոփոխվի, որպեսզի ծեռքը հուսալի հենարան լինի գենքի համար, և գենքը ավելորդ թափահարումների չենթարկվի:

Մարզիչը ցուցադրում է պառկած դիրքը կրակելու ծևերը՝ առանց գոտու օգտագործման: Փողակալը դրվում է հենակին, ծախ ծեռքը դրվում է փողակալի տակ կամ էլ բռնում է կոթունի ներքեկից: Նետու ցույց է տալս պառկած դիրքի հենակով կրկնելուն պատրաստվելը՝ ծախ ծեռքի դաստակը հենակով վրա, որից հետո գոտու հարմարեցնելը և հանձնելը ծախ ծեռքին և հետո հենց նույն՝ գոտիով և հենակով պատրաստվելու ձևը: Պառկած

դիրքից հենակի օգնությամբ կրակելու ժամանակ պետք է հիշել հետևյալը:

- փողակալը գտնվելու տեղը հենակի վրա պետք է լինի մշտական: Կրակելու ժամանակ հենակը չպետք է շարժվի: Դրացանը պետք է սեղմել ուսին այնպես, որ նշան բռնելու ժամանակ կորունը չիջնի ներքև կամ չգնա մի կողմ: Պատրաստվելիս բարձրության փոփոխությունը կախված է թևի տակ դրված թունբ-պարկիկի փոփոխությունից: Նրա բարձրությունը պետք է լինի այնպիսին, որ հրաձիգի կրծքավանդակը չկտրվի փորոքից:

Պառկած դիրքից ձեռքով կամ հենակով կրակել սովորեցնելու համար մարզիչը խմբին կանգնեցնում է մի շարք, բոլորին հրահանգ է տալիս հրացանը վերցնել աջ ձեռքով, բռնել փողակալից, աջ ոտքով մի քայլ անել առաջ և աջ, հենվել ծախ ծնկի վրա, գոտիով կրակելու ժամանակ հագնել ծախ ձեռքին գտտին, պառկելով գետնին՝ հենվել ծախ ձեռքի արմունկին (դաստակը շրջված դեպի ներս) և պառկել ծախ կողդի վրա, ծախ ձեռքով բռնել հրացանը փողակալից, տեղավորել ափի մեջ՝ բոլք մատին ավելի մոտիկ, ծախ ձեռքը տանել առաջ, շրջվել և պառկել փորի վրա, աջ ձեռքով հենել կորունի ծոծրակալի վերին մասը անրակուսկորին՝ վզին մոտիկ, աջ արմունկը թողնել ազատ և դաստակով բռնել կորունի վզիկը (ատրճանակային բռնաստեղը):

Առանց գոտու ձեռքով և հենակով կրակելու ժամանակ թողնել արմունկը ազատ գետնին, աջ ձեռքով թերևակի սեղմել հրացանակորը ուսին (Եթե հրացանը ունի շարժական ծոծրակալ, ապա անհրաժեշտ է ցուցադրել ծոծրակալի ճիշտ կարգավորումը՝ կախված բարձրությունից): Վզի մկանների անհարկի լարումից խուսափելու համար, այտու դնել հրացանակորի գագաթին այնպես, որ աչքը գտնվի դիաֆրագմային հակառակ, և նաև հրաձգի մոտ պետք է լինի, այն զգացողությունը, որ գլուխն ու հրացանակորը մի ամբողջություն են կազմում:

Հենակից հրաձգությամբ պատրաստվելու ժամանակ գործում են նույն կանոնները: Այս դեպքում հմտություն է պետք, ոչ միայն սկսնակներին, այլև որակյալ մարզիկներին, որնք պետք է մանրազնին ստուգեն գենքը:

Կրակելուն պատրաստվելը մշակվում է մասնավորապես այնքան ժամանակ, քանի դեռ սովորողները չեն տիրապետում պառկած դիրքից կրակելու ժամանակ մարմնի ճիշտ դիրքին: Մանր անծանությունները պետք է ուղղվեն հետագայում, քանի որ պատրաստվելը պահանջում է հետևողական մշակում:

ԾՆԿԱԾ ԿՐԱԿԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Բոլոր դիրքերի ցուցադրելուց հետո պետք է անցնել այն վարժություններին, որոնք ևս անհրաժեշտ են հմանալ:

ա) Ընտրվում է թմբի դեր կատարող պարկիկ, որպեսզի ուսնաբարը շթերվի ոչ առաջ, ոչ հետ, իսկ ոտքերի ծայրերը հենվի հատակին: պարկիկը հետագայում խորհուրդ չի տրվում փոխել, քանի որ նրա փոփոխման դեպքում լինում են այլ փոփոխություններ: Այս կոշիկի կապերը պետք է անպայման բացել:

բ) Ընտրվում է գոտու երկարությունը և փողակալի վրա փողակալի ամրացնան տեղը՝ կախված ձեռքի երկարությունից:

գ) Ուղղվում են դիրքի բոլոր անձշտությունները: Դատուկ ուշադրություն են դարձնում իրանի դերին և իրանի հավասարակշռությունը (որպեսզի ոչ մի կողմ չքաշվի):

դ) Ուշադրություն է դարձվում նրան, որ աջ ձեռքի դաստակը չդիմումի ծախ ձեռքին կամ գոտուն:

ե) Գլուխը պետք է լինի ուղիղ, ոչ թե թեքված:

զ) Գոտու երկարությունը, հրացանակորի երկարությունը և փողակալի ամրացնան տեղը ընտրվում է այնպես, ինչպես պառկած դիրքից կրակելու ժամանակ, չնայած կարող են և լինել որոշ անհատական շեղումներ: Ծոծրակալի կեռը իշեցվում է ավելի ցած, քան պառկած դիրքի ժամանակ:

ՑԱՆԿԱՑԱԾ ԴԻՐՔԻՑ ԿՐԱԿԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Պառկած և ծնկած դիրքից կրակելու կանոններին տիրապետելուց հետո անհրաժեշտ է սովորել կանգնած դիրքով կրակելու տեխնիկայի կանոնները:

«Հրաձիգ-զենք» համակարգի ընդիհանուր նշանակության կենտրոնը կանգնած կրակելու ժամանակ գտնվում է ավելի բարձր, քան մյուս երկու դիրքերի ժամանակ, իսկ մարմնի մասերը առանց հենվելու դիրքում շարժումների ավելի մեծ ազատություն ունեն: Տատանումների հաճախականությունը այտել ավելի մեծ է, և դրանով է բացատրվում կանգնած կրակելու բարդությունը: Սովորողներին ցուցադրում են կանգնած կրակելու տարրեր և դիրքերը (աջից, ձախից, առջևից և հետևից): Մարզիչը պետք է մարզիկի ուշադրությունը հրավիրի կանգնած դիրքով կրակելու տեխնիկայի հետևյալ կանոններին.

1. Ուսնաթարթերը պետք է բացել ուսերի լայնության չափ, շրջվել 35° - 40° անկյան տակ, գիծը, որ անցնում է թաթերի տակով,

ուղղված է զուգահեռ կամ ավելի ձախ հրաձգության հարթությանը:

2. Ոտքերը ուղղված են ծնկային հոդում:

3. Իրանը պետք է թերքած լինի դեպի ձախ և այնքան հետ, որ հրացանի ծանրության ուժի ազդեցության տակ չտապալվի (չքաշի ձախ, աջ, առաջ կամ ներքև):

4. Ձախ ծերքի արմունկը պետք է գտնվի կողին՝ կողքի ոսկորի գագաթին, նախաբազուկը պետք է լինի գրեթե ուղղահայաց: Եթե հրաձգությունը կատարվում է սպորտային հրացանից, ապա այն բռնվում է ձախ ծերքի մատներով, եթե կամավոր հրացանից է, ապա բռնվում է շամպինոնի (հատուկ բռնակի) օգնությամբ:

Դիրքի կողմուրուծում: Փորձով ապացուցված է, որ հրաձիգների մոտ տարածական կողմնորոշումը այնքան էլ լավ չի զարգացած: Յրաձգության գործընթացը նաև ցույց է տվել, որ հաճախ դիաչելու միջին կետը նույնիսկ իդեալական պայմաններում չհասկացված պատճառներով զգալիորեն տարբերվում է թիրախի կենտրոնից: Խելապես, հրաձգության ժամանակ բավական է փակել աչքերը 20-30 վրկ. և կնկատենք, որ նշանահատիկը կանգ է առնում ոչ թե թիրախի շրջանում, այլ բոլորովին ուրիշ կողմում: Առանձնապես մեծ շեղումներ են լինում հորիզոնական ուղղությամբ: Բնականաբար, տեսողության ստուգման ժամանակ հրաձիգները թույլ չեն տալիս գենքի մեջ շեղումներ, բայց պետք է նկատել, որ մարզիկների շարժողական համակարգը երկարատև ժամանակահատվածում չի ապահովում գենքի բավականաչափ ճշգրիտ օգտագործումը: Շեղումները բացատրվում են այն մկանների լարվածությամբ, որոնք մասնակցում են «հրաձիգ-գենք» փոխազդեցությունը: Զենքը նշանառության ժամանակ պահպում է մկանային համակարգի միջոցով, և երբ գենքը համապատասխան ուղղությամբ ես պահում, մկանային լարվածության փոփոխությունը բերում է այն բանին, որ գենքը կրակելու պահին մի փոքր շեղվում է այն կողմը, որտեղ իրեն ձգում է:

Հաճախ այս դեպքերում հրաձիգը տեսողությամբ տարբերում է գենքի կտրուկ շարժումները կրակողի պահին, ստացվում է ընդհատում, այսինքն՝ կենտրոնաձիգ շեղում է տեղի ունենում: Հաջորդ կրակոցը տեղի է ունենում համարյա նույն ռեժիմով և նորից կամ ֆիքսվում է գենքի շեղումը, կամ նկատվում է ընդհատում որպես կանոն հենց նույն կողմը, կամ էլ չի նկատվում գենքի շեղում, բայց ճեղքումը ոչ հաճախ հայտնվում է նույն տեղում:

Դիրքի կողմնորոշումը հրաձգի մոտ ձևավորվում է առաջին իսկ օրվանից, եթե նրան ճիշտ են պատրաստում: Թվում է, թե ամն ինչ շատ հեշտ է, բայց իրականում դա շատ խարուսիկ է: Բանը նրանում է, որ ընդունված դիրքը մնում է հաստատուն համեմատաբար կարծ ժամանակ: Արդեն առաջին իսկ կրակոցների դեպքում են դիրքից բավականին շեղումներ ամբողջությամբ և մարմնի առանձին մասրով: Ասվածից երևում է, որ մարմնի և գենքի ճիշտ կողմնորոշումը անհրաժեշտ է ձևավորել հատուկ վարժությունների օգնությամբ: Յրաձգության պարակիկայում օգտագործվող մթոր է աչքի ժամանակավոր փակումը, գենքի նշանառության ստուգման ժամանակ: Դա լավ է այն պայմաններում, որ այդպիսի ստուգումներ անցկացվում են փակ աչքերով 5-6 կրակոցներ, ոչ պակաս 20-30 վրկ-ում, այլ ոչ թե մեկ-երկու անգամ ամբողջ հրաձգության ընթացքում, ինչպես դա արվում է ստվորաբար: Այս ձևով կուժեղացվի հսկողությունը մկանային համակարգի նկատմամբ: Ցուրաբանչյուր հրաձիգ գիտի, որ պատրաստվելու ընթացքում կարող են լինել շեղումներ: Օրինակ՝ գոտին սահում է ծերքից, հրացանի կոթը սահում է ուսից, այտն է շարժվում կորումի գագաթին և այլն, հատկապես եթե հրացանակորը թույլ է սեղմնված: Շատ կարևոր է նաև ուշադիր վերահսկել հրացանը բռնելու ձևը (աջ ծերքը, որը սեղմում է հրացանակորը ուսին, երեսի ճնշումը հրացանակորի գագաթին, ձախ ծերքը, որը բռնում է շամպինոննը): Այս բոլորը կարելի է ստուգել բավականին մեծ ճշությամբ, եթե մարզիկը գաղափար ունի մարմնի մասերի ճիշտ դիրքի, նրան ապահովող մկանների լարվածության մասին: Բայց այս ընդունակությունը, որպես կանոն, ծերքը է բերվում մասնագիտական մարզումների ընթացքում, որի ժամանակ մարզիկը սովորում է նայել «ինքն իր մեջ», քննադաբար մոտենալ իր գործողություններին և դրանց մեջ համապատասխանաբար ուղղումներ կատարել: Մարզիքը ցույց է տալիս կողմնորոշման հնարքները, այսինքն՝ գենքը նշան բռնել թիրախին, փակել աչքերը և թուլացնել մկանները 20-30 վրկ, նորից տեսողությամբ ստուգել դիրքը և մտցնել ուղղումներ հորիզոնական դիրքում պառկած դիրքից՝ իրանի և արմունկների տեղափոխություն, ծնկած դիրքից՝ աջ ծնկի և ձախ ուղարքաբի տեղափոխում, կամգնած դիրքից՝ ուղեղի թաթերի տեղափոխում:

Ուղղահայաց դիրքում պառկած դիրք՝ գենքի դիրքի ուղղում (քարձը կամ ցածր), գենքի գոտոու կարճացում կամ երկարացում, արմունկների համեմատ մարմնի առաջ ու ետ շարժում, ծնկած դիրքում փոփոխությունները նույն են, ինչ որ պառկած դիրքում,

մարմնի և արմունկների տեղափոխման փոխարեն իրանի մեջ և փոքր կորացումները (բարձրացնում կամ իջեցնում են ուսերը) ավագե պարկիկի բարձրության ընտրությունը. կանգնած դիրքում մարմնի մեջ և փոքր դեպի աջ թեքումները, կորի բարձրացումը և իջեցումը ուսին:

Պատրաստվելը չի կարող լինել բացարձակապես մշտական, քանի որ երբ օրգանիզմը նույն դիրքում երկար է դրսնորվում, դա բերում է հրածքի զգացողության և ընկալումների իջեցում: Չարկ է լինում մշակել պահեստային տարբերակներ մարմնի որոշ մասերի դիրքի այն դեպքերի համար, երբ հրածիգը կորցնում է անհրաժեշտ զգացողությունը, երբ վատանում է զգացողությունների կոռորդինացիան:

Վերջին տարիներին մի շարք հեղինակներ հիշատակում են պատրաստության տարբեր ձևերի գոյության մասին և կոչում են դրանք «ուժային» (Ա.Ա.Յուրև), «ուժային միացումների» մեթոդ (Բ.Վ.Օկուտ), «ակտիվ», «պասիվ», «ակտիվ-պասիվ» (Ա.Յ.Կորիխ): Նույնիսկ սրանց պայմանական բաժանումները այնքան էլ արդարացված չեն, քանի որ առաջին մարմնի և գենքի պահվածքի թվարկված ձևերի սահմանները որոշելը բավականին դժվար է: Երկրորդ՝ մկանների լարվածության և թուլացման աստիճանը կախված է հրածիգի անհատական կարողությունների հետ: Ինչպես արդեն ասվել է, երբ որոշ մկաններ թուլացած են, մյուները լարված են, երրորդները աշխատում են համատեղ ռեժիմով: Նրանց այս տարաբնույթ աշխատանքը պետք է համագործակցված լինի:

Հրածգության պրակտիկայում գործողությունները կատարվում են փուլերով: Սկզբում պատրաստվելուն տրվում է բացարիկ դիրք տարածության մեջ, որի դեպքում գենքը ուղղվում է նապատակին՝ ամբողջական դիրքի կողմնորոշման հաշվին: Դրանից հետո ճշտվում է գենքի դիրքը մարմնի հարաբերությամբ, նրան ավելի մանրակրկիտ բռնում են, ամրացնում են և ուղղորդում են դեպի թիրախ: Հետո վերջին փուլում կրակոցի ժամանակ ապահովվում է «հրածիգ-գենք» կապը:

Ասվածից հետևում է, որ անհրաժեշտ է լայնորեն կիրառել նոր մեթոդիկա անհատի ձևավորման համար: Կրակելու ժամանակ պետք է հաշվի առնել և երկարատև լարվածությունը, և մկանների վիճակը, և այն ամենը, որին առնչվում են ուսումնամարզական գործնթացի ժամանակ:

ԾՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Նախապատրաստական բոլոր փուլերին տիրապետելուց հետո պետք է անցկացնել նաև շնչառությունը կանոնավորելու ուսուցումը: Շնչառության պահումը դադարեցնում է շնչառական շարժումները, որը հանդիսանում է ազդանշան, որ հրացանը կանգառնի նշանառության կետում և հրածիգը քաշի ձգանը: Կրակոցից անմիջապես հետո շարունակվում է շնչառությունը: Կախված այն բանից, թե շունչը որքան է պահվում կրակոցից հետո, հրածիգի շնչառության վիճակը և նրա պատրաստվածությունը կարող է լինել նորմալ, մի քիչ խորը և շատ խորը: Չարկ չկա պահել շունչը և դրանով իսկ առաջացնել դժվարություններ և ծանր զգացումներ: Անհրաժեշտ է շնչառությունը պահելու ժամանակը հավասարեցնել կրակոցը կատարելու օպտիմալ ժամանակի հետ, որը դանդաղ կրակելու դեպքում չպետք է անցնի 5-10 վրկից:

Կրակելու դիրքից կախված փոխվում է նաև շնչառության բնույթը: Պառկած և ծնկած կրակելու ժամանակ շնչառությունը ավելի հաճախատ է, բնական է, ընդհիշումները ավելի կարծ են: Եթե շնչառությունը հաճախանում է և խորանում, ապա ձգանը քաշելու սկզբի պահին պետք է շնչառությունը նորմալացնեն: Կանգնած կրակելուց հետո շնչառությունը ավելի է խորանում:

Ինչպես արդեն նշեցինք, վարպետ կրակողները շունչը պահում են ինչպես բնական կիսաարտաշնչման ժամանակ, այնպէ էլ տարբեր ռեժիմների ժամանակ: Յուրաքանչյուր հրածիգ իր համար պետք է ընտրի շնչառության համար ծևը կրակոցների արանքում և շնչառության պահումը կրակոցները կատարելու ժամանակահատվածում:

Պետք է նշել, որ շնչառության կառավարմանը կարող է նապատել հանգստությունը: Այսպիսով, շնչառության յուրահատուկ ձևերի օգտագործումը շնչառական շարժումների մարման հետ միասին համարվում է հրածիգի շնչառական տեխնիկայի ամենառացիոնալ օգտագործման ձևը կրակոցի պահին և նրանից հետո: Շնչառական շարժումների կանոնավորումը և ուսուցումը պետք է զուգակցվի նշանառության և ձգանի քաշումը դեկավարելու հետ: Այն պետք է կատարելագործվի հրածիգի պատրաստության բոլոր էտապներում:

ԾՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հրածգության մարզական մեթոդական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում նշանառության հարմարանքներին (նշանահատիկի կտրվածք կամ նշանոցի դիաֆրագմա): Նշա-

նառության ճշգրտությունը հանդիսանում է այն որոշիչ գործոնը, որը ապահովում է հրաձգության որակը: Բայց տեսնել, որ նշանահատիկը ուղղի հավասար է նշանակետին, դա նշանակում է, որ անպայման պետք է դիպչի «10» -ին: Անհրաժեշտ է, որ զենքը այդ դիրքում պահել նաև այն ժամանակ, երբ քաշում են ձգանը:

Նշանառությունը պետք է պահպի:

-նշանահատիկի հստակ տեսանելիությունը կենտրոնում և հատկապես նշանառության կետում, ինչպես նաև ճիշտ ժամանակին տեսողությունը կենտրոնացնելու նշված օբյեկտներից որևէ մեկի վրա.

-նշանահատիկի և նշանառության կետի համատեղության և նրա շեղումները հստակ ընկալելը և նախազգալը.

-նշանառության բավականաչափ տեսանելիությունը ամբողջ երկարատև ընթացքում.

-զենքի ուղղումը դեպի նշանառության կետը:

Նշանառության ուսուցումը սկսվում է զենքի նշանառության սարքավորումների ուսումնասիրություններից և նրանց օգտագործման գործընթացից: Շատ կարևոր է նաև հրածին ծանոթացնել նրանց կառուցվածքին և իրենց բնորոշ անսարքություններին: Յետու անհրաժեշտ է որոշել հրածիգների առաջատար աչքը, նրանց ծանոթացնել «հարթ նշանահատիկ» հասկացողության հետ, նշանառության ժամանակ տեսողության հարմարվելու առանձնահատկություններին և հնարավոր սխալներին, նշան բռնելուն, զենքի պահելուն և կրակողի ընթացքում աչքի հանգստի ձևերին:

Անհրաժեշտ է սկսնակ հրածիգներին ներշնչել, որ նրանք ուշադրությունը պետք է կենտրոնացնեն իհմնականում ճեղքի մեջ նշանահատիկի դիրքին՝ նշանառության կետի հետ հարաբերությամբ, հատկապես բաց նշանառության ժամանակ:

Յայտնի մարզիկների հետ կատարած հարցումներից պարզվել է հետևյալը.

1. Նշանառության տեսողությունը հմուտ հրածիգների մեծամասնության մոտ կազմում է 5-10 վայրկյան: Նշանառության տեսողությունը կախված է զենքի կայունությունից: Երբ զենքը կայուն չէ, ապա նշանառության տեսողությունն ավելանում է: Օդակածն նշանահատիկի դեպքում ուշադրությունը կենտրոնանում է օդակով թիրախին, իսկ ուղղանկյուն նշանահատիկի դեպքում՝ նշանահատիկի գագաթին:

2. Յնուտ կրակողների մեծամասնությունն օգտագործում է օդակածն թափակցիկ նշանահատիկներ՝ վարդագույն, մթնացնող,

դեղին, գագարագույն և անգույն երեսակներով: Նշանառության հատիկի ներքին տրամագիծը 3.5-4 մմ է: Եթե երեսակը ներկված չէ, ուրեմն արևոտ եղանակների դեպքում նպատակահարմար է օգտագործել արևից պաշտպանող երկարիչ դրոշապատյանի վրա:

3. Դիօպտրային անցքերի տրամագիծը սահմանվում են 1-1.4 մմ-ի չափերում, իսկ արիեստական լուսավորության դեպքում՝ 1.75 մմ: Անցքերի ընտրության ճշտությունը որոշվում է «խնձոր» պատկերով նշանահատիկի հստակությամբ և նրանց միջև եղած լուսամցրով:

4. Լուսային ֆիլտրերի օգտագործումը տալիս է դրական էֆեկտ: Ավելի շատ օգտագործվող լուսային ֆիլտրերն են՝ ծխագույնը, չեզոքը, դեղինը: Լուսաֆիլտրները բարձրացնում են տեսողական ընկալումների դիպուկությունը:

5. Զախ աչքը նշանառության ժամանակ ավելի լավ է կողելով չփակել, այլ փակել սպիտակ, անթափանց նեղ կտորի շերտով:

6. Քանի որ թույլատրվում է փորձնական կրակոցների սահմանափակ քանակություն, ապա չպետք է շտապել և սկսել ստուգողական կրակոցները:

Նշանառության ուսուցումը սկսվում է հարթ նշանառության հատիկ հասկացության պարզաբանումից: Ամենամեծ դժվարություն այն է, որ հրածիգին ստվերեցնեն շեղել ուշադրությունը և այն կենտրոնացնել նշանառության որոշակի օբյեկտների վրա նշանառությունը ճշգրտելու ժամանակ: Մարզիչը պարապմունքների ժամանակ տալիս է տեսողության կոնցենտրացիայի, բաշխման և փոխանակման վերաբերյալ կոնկրետ առաջադրանքներ:

Այս դեպքում մեծ էֆեկտ է տալիս նշանառության հարմարանքների ձևը, չափը և գույնի ժամանակավոր փոփոխությունները:

Բոլորին հայտնի է, որ ուսուցման սկզբնական փուլում շատ է օգնում հրածագությունը էկրանի (կամ սպիտակ թղթի) վրա: Այն օգնում է կենտրոնացնել ուշադրությունը նշանառության հարմարանքների վրա և գտնել հարմար պահը նշանառության հատիկը թիրախի «խնձորի» տակ պահելու:

Որպես կանոն, էկրանին կրակելու ժամանակ բավականին բարձրանում է արդյունավետությունը՝ թիրախին կրակելու համեմատությամբ: Այդ բացատրվում է նրանով, որ հրածիգը, հաշվի չառնելով նշանառության հատիկի դիրքը, նույնիսկ բավականին ուժեղ տատանումների դեպքում, ազատ քաշում է ձգանը:

Փոքրանում է «կրակոցին սպասելու» հավանականությունը և նրա հետևանքները, այսինքն՝ մկանների կտրուկ կրճատումը կրակոցը կատարելու ժամանակ և դրա հետ կապված՝ զենքի անկյունային շեղումները, ինչպես նաև սխալ՝ սկսնակ և անփորձ հրածիգների: Բարձր որակավորում ունեցող մարզիկների համար այդ սխալները բնորոշ չեն: Նրանք հնարավորություն ունեն ինչ-որ պահ տեղափոխել կենտրոնական տեսադրությունը նշանառության հատիկից (օրինակ՝ օղակածն նշանառության հատիկով կրակոցի ժամանակ) թիրախի «խնձորի» վրա: Դա չի խանգարում նրանց պահպանել լավ կայունություն և գործողության կողղորդնացիան: Նպատակահարմար է նշանառության ուսուցումը սկսել՝ օգտագործելով 2-2.5 մմ չափով ուղղանկյուն նշանառության հատիկը բոլոր դիրքերով կրակելու դեպքում: Դետագայում անհատական կարգով կարելի է ընտրել օղակածն նշանառության հատիկը: Կանգնած դիրքով կրակելու դեպքում չափությունը չտապել անցում կատարել օղակածն նշանառության հատիկին: Սա կարելի է անել, եթե հրածիգը բավականաչափ տիրապետում է զենքին և նրա մոտ բացակայում է «կրակոցներին սպասելը»: Կատարելագործման շրջանում օգտակար է ժամանակավորապես մարզվել էկրանով հրածգությամբ և անցնել օղակային նշանառության հատիկից ուղղանկյուն նշանահատիկին և հակառակը:

Դաշտի կրակելու ժամանակ նույնիսկ փորձառու մարզիկը չի մկատում անհաջող կրակոցը և թիրախին հայտնվում է վատ, սխալ անցքեր: Այդ դեպքում հրածիգները ասում են «չի նշել», նկատի ունենալով, որ կրակողը չի մկատել կրակոցի պահին նշանառության հատիկի շեղումը: Բայց միայն տեսողության մեջքը չէ: Լավ է ասել «չի գգացել շեղումները»՝ ինչք ընդունելով ստուգման շարժական ասպեկտը սկզբից, հետո՝ տեսողական ասպեկտը: Այս օրինակը ցույց է տալիս հրածիգի ոչ բավարար ունակությունը՝ մկանային զգացողությամբ զենքի նշանառությունը վերահսկելու: Մեթոդական տեսանկյունից լիովին իմնավորված կլինի օգտագործել բոլոր միջոցները, որոնք կօգնեն հրածիգին զարգացնելու այս կարևոր ունակությունը:

ԶԳԱԾԻ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՆԸ

Սկզբնական շրջանում ձգանի կառավարման ուսուցումը հատուկ տեղ է գրավում, քանի որ ձգանի քաշումը հանդիսանում է տեխնիկական էլեմենտ, որն ավարտում է հրածիգի գործողությունների շղթան կրակոցն իրականացնելու գործում:

Սկզբնական շրջանի ուսուցման մեթոդիկան հենվում է պարագրքայի թվացող սկզբունքի վրա: Այս սկզբունքը հենվում է այն որոշակի լարվածության վրա, որ հրածիգը կատարում է ճգդիտ նշան բռնելու համար և մեծ ճիգեր է գործադրում ձգանը կառավարելու ուղղությամբ: Բանն այն է, որ մարդկանց մոտ մանկուց դիպուկ կրակելու պատկերացումները կապված են առաջին հերթին ճգդիտ նշանառության հետ: Չկա հստակ պատկերացում, թե ինչպես սեղմել ձգանը, որ կրակելու ժամանակ զենքը չշարժվի կամ չտատանվի: Ձենքի ցնցումները և տատանումները սկսնակ հրածիգի մոտ շատ են և նրան բվում է, թե հանգիստ, դանդաղ ձգանը սեղմելու դեպքում նա չի խփի նշանակետին, դրա համար էլ գիտակցորեն թե անգիտակցարք նա քաշում է ձգանը այն ժամանակ, եթե նշանառության հատիկը տատանվելով՝ հանկարծակի հայտնվում է նշանառության կետում: Սա սկսնակ մարզիկների վատ կրակելու պատճառն է, և սրա դեմ պայքարելու համար սկսնակների հետ պարապող մարզիչները իրենց աշխատանքում պետք է գործածեն հստակ մեթոդական ուղղությունները: Նշված հատկանիշը արտահայտվում է անհատական ամեն մի սովորողի մոտ այս կամ այն չափով և տևում է երեքման մի տարուց ավելի: Դրա համար էլ մարզիչը պետք է հիմնավորապես տիրապետի այն մեթոդիկային, որ լիովին հաղթահարի նման իրադրությունները:

Կան նաև այլ հիմնական պատճառներ, որ խանգարում են սկսնակ հրածիգներին դիպուկ կրակել: Այդ պատճառներն են՝

- Նշանառության հատիկի և նշանառության կետի բացարձակ ծերիտ դասավորության ձգուումը, որի խախտելու դեպքում առաջանում է զենքի տատանումներ:

- Դրածիգի ինքնապաշտպանական ռեֆլեքսը կրակոցի ձայնի նկատմամբ, որն արտահայտվում է կրակոցի ժամանակ:

- Զենքը բռնելուն և պահելուն մասնակցող մկանների կտրուկ լարումն կամ բուլացումը: Սա բերում է մեծ անկյունային շեղումներ:

Վերը նշվածներից խուսափելու համար սկսնակ կրակողների մոտ ապահովվում է որոշակի պատկերացումների առաջացում:

- Նշանառության կետից նշանառության հատիկի ոչ մեծ շեղումների ազդեցությունը թիրախի կենտրոնից տեղաշարժ եղած գնդակի տեղերը («տասանոցին» խփելու համար պետք է վստահ սեղմել ձգանը, ուշադրություն չդարձնելով նշանառության հատիկի ցնցումների վրա, քանի որ նրանք իմնականում գուգահեռաբար են շարժվում):

• Զգանի հրման զուգակցումը զենքի պահելուն մասնակցող մկանների կտրուկ կրծատման հետ, որը բերում է գնդակի մեջ շեղումներ թիրախի կենտրոնից:

- Յնարավոր է նաև ցուցամատի առանձին շարժում, որը չեղում նշանառությունը:

Դուսկորված սխալները անհրաժեշտ է վերացնել հրածիգի կամային ձգտումների ցուցաբերման և հմտությունների ձևավորման ճանապարհով:

1. Սահուն, հավասարաչափ շարժումնով սեղմել ձգանը՝ կրակելուց առաջ մատի դամդաղ շարժումնով և արհամարիել նշանառության հատիկի որոշ տատանումներ:

2. Ուշադրությունը կենտրոնացնել ձգանը սեղմելու գգացողությանը և զենքի պահելու հաստատունությանը կրակոցը կատարելու ժամանակ:

Զգանը ղեկավարելու հմտությունների սկզբնական յուրացումը բավականին բարդ գործընթաց է, որտեղ դրսնորվում է սովորող անհատական առանձնահատկությունները, նորա տարիքը, խառնվածքը: Այս տեխնիկական էլեմենտի և դրա հետ կապված շարժումների ժամանակ կարող են կատարվել բավականին սխալներ, որոնք կարող են կատարել նաև բարձր որակավորում ունեցող մարզիկները, հատկապես մրցումների բարդ իրավիճակների ժամանակ: «Յրածիգ-մարզիկի» ուսուցման ու դաստիարակության մեթոդիկան պետք է հիմնվի սկզբնական շրջանում այս առանձնահատկությունները հաշվի առնելու վրա, ինչպես նաև հետագա կատարելագործման ժամանակ: Զգանի կառավարման կատարելագործման գործընթացը նախատեսում է հետևյալը.

- զենքի կայունացման ժամանակահատվածի մեծացում,
- ձգանի բնույթի ընտրությունը երեք դիրքով հրածգության ժամանակ,

- ձեռքի և ձգանը սեղմող մատի մկանահոդային համակարգի գգացողության բարձրացում,

- ձգանի սեղման ծիշտ միջոցի ընտրությունը կրակոցը սահուն ավարտելու համար: Յուսալի և հաստատուն զենքի դեպքում ձգանի սեղմումը դադարում է պրոբլեմ լինելուց: Դրա հետ մեկտեղ շարժումը զգալու ծշտությունը և մատի ճնշումը ձգանի վրա ունի մեծ նշանակություն հրածիգի վիճակի փոփոխության համար, քանի որ դա ազդում է զենքի տատանումների մեծացման վրա:

Յրածիգի՝ ձգանը սեղմող մատի մկանահյուսվածքային զգայունակության փորձնական ստուգումները ցույց են տվել, որ

զգայունակության ամենամեծ ճշտությունը դրսնորվում է ոչ միշտ ձգանի այն լարման դեպքում, որ նա կատարում է հրածգության ժամանակ: Օրինակ՝ հրածիգը կանգնած դիրքում օգտագործում է ձգանի ձգումը 50գ, այն ժամանակ, եթե ամենալավ զգացողությունը 200 գր ձգման դեպքում է: Դրա համար էլ հրածիգին պետք է խորհուրդ տալ ընտրել ձգանի այնպիսի ձգում, որ գործնականորեն ստուգվել է: Մատի զգայունակությունը զենքի վրա ստուգելու համար դրվում է հրածգային ինդիկատոր և միացվում է ձգանի հետ: Զգանային մեխանիզմը կարգավորվում է, որ ձգանի 0.5-0.7 մմ շարժման վրա ազդում է 50 գրամից մինչև 1000 գրամ լարվածություն: Զգումը կամ լարվածությունը ամեն անգամ ստուգվում է հատուկ կշեռքի զայնակով: Յրածիգին առաջարկվում են ինդիկատորի սլաքին նայելով, 5 անգամ սեղմել ձգանը բաց փակաղակի դեպքում և հիշել այս զգացողությունը, հետո 10 անգամ կատարել սեղմումներ առանց տեսողության ստուգման: Այսպիսվ, ձգանի տարրեր լարումների դեպքում մարզիչը գրանցում է բոլոր սխալները, նույնիսկ փոքր սխալները և ցույց է տալիս, թե որ դեպքում է մատի ամենամեծ զգայությունը դրսնորվում:

Պառկած և ծնկած կրակելու դեպքում հմուտ կրակողները օգտագործում են կարծ ձգաններ այնպիսի լարումներով, որոնք ապահովում են մատի հուսալի դնումը ձգանի կեռիկի վրա: Կանգնած դիրքից կրակելու դեպքում, որպես կանոն, օգտագործվում են ավելի ծիգ ձգաններ՝ 200 գ և ավելի լարումով:

6.3. ՕՂԱՄՄԻՉ ԿՐԱՑԱՆԻՑ ԿՐԱԿԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Արդեն առաջին պարապմունքների ժամանակ հրածիգը պետք է ստանա գործնական պատկերացում օդամղիչ զենքից կրակելու, նրա առանձնահատկությունների մասին: Ուսուցման յուրօրինակությունը (զենքի ծանրությունը, գլխիկի դիրքը դիօպտրին մոտ, լավ երևացող թիրախի սև «խնձորը» և այլն) թելադրում են ուսուցման մեթոդիկայի մի փոքր այլ մոտեցում: 7.8 թիրախին օդամղիչ հրացանով կրակելու համար հրածիգի առաջ դրվում է մեծ պահանջներ, դրա համար էլ անհրաժեշտ են լավ հրացան և բարձրորակ գնդակներ, որպեսզի հասնեն բավարար արդյունքների: Ի դեպք, սկսնակ մարզիկների տեխնիկական ապահովածությունը ոչ միշտ է գտնվում անհրաժեշտ մակարդակի վրա, և զենքի անհրաժեշտ կայունությանը հրածիգը անմիջապես չի հասնում: Որպեսզի մարզիկը չվնասվի վատ խոցումներից,

նպատակահարմար է թիրախների վրա կտրել կենտրոնից մինչև «ութնոցը» ներառյալ (ուսուցումը պետք է տարվի օդակային նշանառության հատիկով): Այս դեպքում ամեն մի խոցումը՝ կտրված կենտրոնի գոտիում, հաշվում է լավ կամ բավարար, որը հանդիսանում է որոշակի ստիմուլ սովորողների համար:

Արդեն ուսուցման սկզբնական շրջանում պետք է հրաձիգներին ուսուցանել ճիշտ շնչել: Քրածգության ժամանակ պետք է խուսափել մարմինը հետ և առաջ գցելուց: Ազ ձեռքով հրացանի ամբողջական բռնումը չպետք է խուզնդոտի ձգանի մշակմանը: Ուսուցումը տանելով որոշակի փուլերով՝ կարելի է իրականացնել ձգանի կառավարման մշակումը առանց նշանառության, ինչպես նաև նշանառությունը կարելի է սովորել հենակի օգտագործմամբ: Կարելի է օգտագործել նաև մեթոդական այլ հնարքներ: Սովորական հ.8 թիրախով հրածգությունը կարելի է անցկացնել, եթե հրածիգները արդեն բավականաչափ տիրապետում են դիպուկ կրակելու համար նախատեսված հիմնական բոլոր էլեմենտներին:

6.4.ԱՏՐԵՍՆԱԿԻՑ ԿՐԱԿԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ուսուցման սկզբում մարգիչը ցույց է տալիս, թե ինչպես է իրականացվում ամբողջական կրակոցը: Կանգնելով կրակագծին այնպես, որ նրան լավ տեսնեն կրակողները՝ մարգիչը, ատրճանակը ձեռքին, ընդունում է կրակելու համար սկզբնական դիրք և կրակում մի քանի կրակոցներ թիրախին: Եթե մարգիչն օգտագործել է հրածգության հնորարարությունները և կարող է ցուցադրել լավ արդյունք, ապա նա ինքն է ցուցադրում հրածգության տեխնիկան: Եթե դրանում համոզված չէ, ապա հրավիրում է հնուտ հրածիգի, որը պարապմունքի ժամանակ ցուցադրում է ոչ միայն ճիշտ տեխնիկան, այլև հավաքում է բարձր միավորներ:

Մարգիչն իսկույն բացատրում է մասնակիցներին, որ կարևոր խիստ հրածգությունն է, իսկ դիպուկությունը միայն նշանառության հարմարանքների ուղղման հաշվին՝ թիրախի կենտրոնի և լավ խտացված կրակոցների միացության արդյունքն է: Նա կարող է սովորողի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ դիպուկը միջին կետը խիստ անհատական է, դրա համար հրածիգը պետք է ունենա իր ատրճանակը:

Այդ պարապմունքներին մարգիչը ծանոթացնում է սովորողներին պատրաստվելու տարբեր տարբերակների հետ: Ցանկալի է ցուցադրել զննական միջոցներ, որտեղ պատկերված լինեն աշ-

խարիի ուժեղ հրածիգները իրենց անհատական ցուցանիշներով: Մարգիչը պետք է նշի ռացիոնալ պատրաստվելու հիմնական ընդհանուր պահանջները և դրանց մեծամասնության կատարումը:

Հետո սկսվում է պատրաստվելու պրակտիկ ուսուցումը, որն անցկացվում է առանձին մասերով կամ էլեմենտներով՝ ա) ոտքի դիրքը, բ) հրանի դիրքը, գ) գլխի դիրքը, դ) ձեռքերի (աջ և ձախ) դիրքը, սեղմումը:

ՈՏՔԵՐԻ ԴԻՐՔԸ: Տալով հրահանգ ոտքերը դնել պատրաստվելու դիրքում մարգիչը ստուգում է կատարման ճշտությունը: Ամեն մարգիկ պետք է ինքնուրույն ընդունի անհրաժեշտ դիրքը: Քրածիգների ուշադրությունը հրավիրվում է օպտիմալ տարբերակի վրա, թե ինչպես շրջել թաթերի վրա և ոտքերը ինչ լայնությամբ դնել:

Ուժնաթաթերի դիրքը ճշտելու համար որոշ հրածիգներ կատարում են նախնական դիրքավորում՝ ձգտելով գտնել ճիշտ դիրքը: Այսպիսի մոտեցումը պետք է օգտագործել ոչ միայն սկսնակներին սովորեցնելու ժամանակ, այլ նաև հետազայում: Սովորեցնելու ժամանակ պետք է օգտագործել նախապատրաստական վարժություններ, որոնք օգնում են արագ յուրացնել և ամրապնել պատրաստվելու:

Կավիճով գծվում է կրակելուն նախապատրաստվող մարգիկի հետքը, հետո նրան առաջարկում են հեռանալ և նորից կանգնել ու նախապատրաստվել առանց նայելու գծված հետքին: Երբ հրածիգը պատրաստվում է, հետքը նորից է ընդգծվում և այդպես 5-6 անգամ կրկնվում է: Միջին տարբերակը բոլոր ընդգծվածների մեջ հանդիսանում է տվյալ մարգիկի համար ամենաընդունելին: Մարգիկը, որն անցնում է հերթական պատրաստությունը, ամեն անգամ պետք է ստուգի ոտքերի դիրքի ճշտությունը:

ՄԱՐՄՆԻ ԳԼԽԻ ԵՎ ՁԵՌՔԵՐԻ ԴԻՐՔԸ: Երբ ոտքերի ճիշտ դիրքի ուսուցումն արդեն յուրացվում է, ապա ուսումնասիրվում է մարմնի դիրքը:

Քրածիգը կանգնում է կրակագծին, աջ ձեռքով վերցնում է ատրճանակը և ձեռքը բարձրացնելով թիրախի ուղղությամբ՝ ձգում է իրանը այնքան, որ հեշտ լինի ատրճանակը բռնել պարզված ձեռքում:

Ուշադրություն է դարձվում այն բանի վրա, որ իրանը շատ հետ չգնա կոմպենսատորային շարժումների հետևանքով, այսինքն ուսային գոտին հետ տանել, իսկ կոնքը՝ առաջ: Մարգիչը հետևում է նաև այն բանին, որ գլուխը աջ թեքված չլինի և գտնվի

ճիշտ դիրքում՝ առանց լարվածության: Գլխի ճիշտ դիրքը ստուգելու համար խորհուրդ է տրվում ատրճանակով ձեռքը պարզել առաջ և գտնել նշանառության հատիկը ճեղքում, հետո չիջեցնելով ատրճանակը՝ գլուխը թեքել հերթականությամբ՝ աջ, ձախ, վերև, ներքև: Այսպիսով սովորողը իսկապես համոզվում է այն բանում, թե ինչ նշանակություն ունի գլխի դիրքը՝ տեսնելով, որ այդ ժամանակ նշանահատիկը դուրս է մնում ճեղքից: Կրակողը ձախ ձեռքը դնում է գոտու վրա, իսկ աջը՝ կամ սեղանի վրա, կամ էլ ծալում է արմնկային հողում: Շրջվող կամ փակվող թիրախին կրակելու ժամանակ 45° անկյան տակ աջ ձեռքը իջեցնում են ներքև: Վարժությունը անհրաժեշտ է կատարել մի քանի անգամ՝ տեղից դուրս գալով և վերադառնալով: Ստուգելով պատրաստվելը՝ անհրաժեշտ է վերահսկել մարմնի և ոտքերի դիրքը հրաձգության ուղղության նկատմամբ: Սովորողը ելման դիրք է ընդունում և ձեռքը բարձրացնում է դեպի «խնձորի» տակ կամ թիրախի կենտրոնը: Յետո հայացքով ստուգում է, թե որտեղ է գտնվում ձեռքը:

Եթե նրան թվում է, որ ձեռքը աջ է զնացել թիրախի կենտրոնից, անհրաժեշտ է ձեռքը շատ թեքել դեպի ձախ, իսկ եթե ձախ է՝ աջ թեքել:

Պետք է իիշել, որ թեքվել պետք է երկու ոտքերի ուղղությամբ, քանի որ միայն մեկ ոտքով տեղափոխությունը արդեն կտանի պտույտի և մկանների լարման: Որոշելով դիրքը հրաձգության ուղղության նկատմամբ՝ գլուխը անհրաժեշտ է պահել միշտ նույն ձևով:

ԲՈՆԵԼԱԶԵՎ: Կա հնարք, որը օգնում է ճիշտ կատարել և ստուգել ատրճանակի բշնելաձեկը: Մարզիքը բռնում է սովորողի ձեռքը և այն սեղմում է այնպիսի ուժով, ինչպես կսեղմեր ատրճանակը: Ցույց է տալիս ինչպես պետք է պահել գենքը: Յետո բոլոր մարզիկները ցույց են տալիս մարզիչին, թե ինչպես են իրենք բռնում ատրճանակը, ինչ ուժով են սեղմում բռնակորը, ինչպես է աշխատում ցուցանատը մյուս մատների համեմատությամբ: Դրա համար մարզիքը խնդրում է հրաձիգին բռնել իր ձեռքը և սեղմել այնպիսի ուժով, որով ինքը ցուցադրման ժամանակ սեղմում էր հրաձիգի ձեռքը: Յետո մարզիքը սովորողի ձեռքի վրա մեկ անգամ ևս ցույց է տալիս ինչպես է ճիշտ սեղմել ատրճանակը, ցույց է տալիս ցուցանատի ճիշտ աշխատանքը և իիշեցնում է, որ մնացած մատները այդ ժամանակ չեն թուլանում: Սովորողները կրկնում են ատրճանակի բշնելաձեկը, իսկ մարզիքը կատարում է համապատասխան ցուցումներ:

Ատրճանակի բռնելու և ձգանի կերպիկի սեղմնան կորերի գրաֆիկում երևում է, որ սպորտի վարպետների մոտ նշանառության և ձգանի կառավարման ամբողջ ընթացքում պահպանվում է նույն, միանման ուժերի լարվածությունը ատրճանակի բռնելու ժամանակ, իսկ 3-րդ կարգի մարզիկի մոտ ուժերի լարումը կրակոցի պահին բավականին աճում է, հետո թուլանում է: Այս փոփոխությունը և տարբերությունը բերում է թրչչի անկյան փոփոխության, որով և փոփոխվում է կրակոցների միջին կետը:

Լավ կրակելու համար ուրիշ գործոններից բացի անհրաժեշտ է ատրճանակի բռնակորի սեղմնան համար միանման ուժերի լարում և ատրճանակի հանճան բռնելաձեկ:

Անհրաժեշտ է հրաձիգներին սովորեցնել ատրճանակի ճիշտ բռնելաձեկը, այլ ոչ թե ճեղքի նկատմամբ նշանառության հատիկի հարմարեցումը: Չի կարելի նշանառության հատիկը հավասարեցնել ճեղքին, այն պետք է գտնվի ճեղքի մեջ միայն մկանային զգացողության հաշվին, և միայն տեսողությամբ է վերահսկվում նրա դիրքը: Կան մերժական հնարներ, որոնց միջոցով սկսնակ մարզիկները կարող են արագ յուրացնել դաստակային հոդի ճիշտ անրացումը.

1. Յրաձիգին առաջարկվում է նախապատրաստվել, նշան բռնել, փակել աչքերը: 15-20 վրկ հետո դրանք բացել և ճշտել նշանառության հատիկի դիրքը ճեղքում: Փակ աչքով ձգուել մկաններով վերահսկել ատրճանակի պահելը: Յասնել նշանառության հատիկի միանման դիրքին նշանառության ճեղքի մեջ:

2. Նույն վարժությունը, միայն ժամանակը հասցնել 1 րոպեի:

3. Յրաձիգը պատրաստվում է, նշան է բռնում, իսկ մարզիքը այդ պահին փակում է նշանառության հատիկը պաշտպանական շերտով: 15-20 վրկ հետո այդ շերտը վերցնում է: Յրաձիգը նայում է, թե նշանառության հատիկը որքան է տեղաշարժված, ուղղում է բռնելաձեկը և վերահսկում է ամրացումը դաստակային հոդին:

4. Յրաձիգը նշան է բռնում թիրախի կենտրոնին: 5-6 կրակոց անում է առանց նշանառության հատիկին նայելու, պահում է ատրճանակը մկանային զգացողությամբ նշանառության շրջանում:

5. Նույն ուժով սեղմելու համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր սարքեր և շտապ ինֆորմացիայի համար նախատեսված հարմարանքներ:

6. Մարզիքը ձեռքն է վերցնում դիմանմետրը և աշխատում է պահել հանճնարարված ուժերի լարումով որոշակի ժամանակ:

Այդ ժամանակ ձեռքբերը պարզված են առաջ: Կարգավորելով դիմանմետրի պահման ժամանակը և սեղմնան ուժը, պետք է հասնել ժամանակի որոշակի հատվածում գործադրված ուժի միօրինակությանը:

7. Նույնատիպ վարժություն, միայն այն կատարվում է ռետինե գնդակի օգնությամբ:

ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ: Նշանառության հետ ծանոթանալու համար օգտագործում են ցուցադրական նշանառության հատիկը, պլակատներ: Դետո մարզիչը սովորեցնում է մարզիկներին ճիշտ նշանառությունը: Դրանից հետո սովորողները աշխատում են նշանառության վրա արդեն ատրճանակը ձեռքում: Մարզիչը ցուցունքով բարձրացնում են ատրճանակը՝ առաջ պարզած ձեռքի մեջ և ճշտում են նշանառության հատիկի դիրքը ճեղքի մեջ՝ ուղղելով ատրճանակը մաքուր թղթի վրա՝ նրա կենտրոնին, ձգանը չսեղմելով:

Առաջին հերթին անհրաժեշտ է հստակ տեսնել նշանառության հատիկը ճեղքի մեջ, իսկ երկրորդ հերթին՝ ֆոնը: Սովորաբար նշանառության ժամանակ փակում են մեկ աչքը, իսկ երկրորդով նայում են նշանառության հատիկին և թիրախին ամբողջությամբ: Բայց լավ է նայել երկու աչքով էլ, այդպես հեշտ է պահպանել աչքի ֆոկուսը: Նշանառության վրա նշանառություն նշանակում է նաև զենքը ճիշտ ուղղել դեպի թիրախը և պահել նրան նշանառության շրջանում: Դրահագը, ընդունելով նախապատրաստվելը, բարձրացնում է զենքով ձեռքը թիրախի «խնձորի» տակ (կարելի է իջեցնել ձեռքը «խնձորի» տակ վերևից) լրսանցքի հետ, որը համապատասխանում է պատրաստվելու շրջանի հետ, նպատակ ունենալով՝ պահել զենքը նշանառության տեղանքում: Ինչպես կանոն, սկսնակ կրակողներին սովորեցնում են զենքի պահելու հատուկ մեթոդներ, այսինքն՝ թույլ չեն տալիս նրան դուրս գալ թիրախի «խնձորի» տակից՝ ուշադրությունը կենտրոնացնելով այդ գործողությամբ: Այսպիսի խնդիրը սկզբնական ուսուցման ժամանակ մարզիկները դժվարությամբ են իրականացնում, քանի որ մեծամասնությունը ձգտում են հասնել զենքի ամենալավ կայունությանը: Զենքի բազմաթիվ բարձրությունները թույլ չեն տալիս արագ հասնել նրա կայուն դիրքին:

Զենքի թիրախին ճիշտ պահելու ուսուցման համար կարելի է օգտագործել հետևյալ վարժությունները.

- հրաձգություն մեծ սախտակ թղթի վրա,

- ատրճանակի ուղղում թիրախի «խնձորի» տակ՝ տարբեր լրսանցքներով.

- ատրճանակի ուղղումը դեպի այն վանդակը, որը նկատված է թիրախի «խնձորի» տակ,

- զենքի ուղղումը տարբեր տրամագծերի շրջանի մեջ «խնձորի» տակ:

Նշանառության շրջանը ընտրվում է կախված ձեռքի հաստատունությունից: Զգանային կերիկի սեղմումը ճշգրիտ համաձայնվում է նշանառության հետ, այսինքն՝ ճեղքում նշանառության հատիկի դիրքի հետ:

Սև շրջանով թիրախին կատարված հրաձգությունը համեմատված սպիտակ թղթի վրա կատարված հրաձգության հետ բարձր ուղղվածություն ունեցող դժվար վարժություն է: Աև «խնձոր» թիրախի վրա ուժեղացնում է տեսողական հսկողությունը:

Զեռքի ճիշտ բարձրացման և նշանառության տեխնիկայի ծանոթանալուց հետո սովորեցնում են, թե ինչպես սեղմել ձգանը:

Կտրճանակների մեծ մասն ունեն ձգանի ազատ քայլ, դրա համար էլ հետագայում մշակվում են ազատ քայլի ընտրություն:

Սարզիչը աշակերտից առաջ է կանգնում, ձեռքը դնելով ատրճանակը պահած ճեղքի վրա: Դետո, ստիպելով նրան միայն պահել նշանահատիկը ճեղքում, ճնշում է իր ցուցանատով նրա ցուցանատի վրա: Եվ այդպես անքան ժամանակ, քանի դեռ սովորողը չի գգացել այն պահը, թե երբ պետք է ընտրել ազատ մուտքը և վերջացնել սեղմումը: Այս գործընթացը կատարելիս ձգանը պետք է բաշած պահել, բայց վերջնական սեղմում ձգանի վրա դեռ չի կատարվում:

Սեղմումը ձգանի կերիկի վրա մարզիկների մեծ մասը կատարում է ցուցանատի 3-րդ ծալքի միջոցով: Սրա հարմարությունը բացատրվում է ոչ միայն այս ծալքի բարձր զգայությամբ, այլ նաև նրանով, որ այդ սեղմնան դեպքում կրակողները հասնում են իրենց նպատակին:

Բարձրացնելով ձեռքը դեպի նշանառության տարածք՝ իրածիքը հայացքով ստուգում է ճեղքում նշանահատիկի դիրքը, միաժամանակ ընտրում է ազատ մուտքը և հսկելով ճեղքում նշանահատիկի դիրքը՝ շարունակում է սահուն, առանց դադարի, հանգիստ սեղմել ցուցանատով ձգանային կերիկը մինչև ատրճանակի փողի առանցքի խորքը: Մնացած երեք մատները այդ պահին չեն թուլանում և սեղմում են ատրճանակի բռնակոթը սովորական ուժով:

Ցուցանատի անկախ աշխատանքը կատարվում է մարզում-ների ընթացքում և փամփուշտով, և առանց փամփուշտի կրակոց-ների ժամանակ:

Զգանի կառավարմանը տիրապատելը սկզբում պետք է յուրացնել առանձին՝ առանց նշան բռնելու, որպեսզի մարզիկը կենտրոնանա միայն այդ էլեմենտի վրա:

Սեղման ճիշտ ձեր ցույց տալուց հետո մարզիչը կատարում է 5-6 կրակոց ատրճանակից: Սովորողները կրնում են նույն վարժությունը, բայց առանց փամփուշտի, որպեսզի ստուգեն ցուցանատի ճիշտ աշխատանքը փողանցքի առանցքի երկարությամբ: Պետք է ատրճանակը բռնած ձեռքը պարզել, սեղմել ձգանը՝ համոզվելով, որ նշանահատիկը գտնվում է ճեղքում: Դատուկ ուշադրություն պետք է դարձնել այն կրակողնի վրա, ովքեր քաջում են ձգանից: Սովորողները պետք է ձգտեն հասնել այն բանին, որ ձգանը ճիշտ սեղմեն, այսինքն՝ նշանահատիկը չինուանա ճեղքից՝ հրահանը զարկանին հարվածելու պահին:

Ցուրացնելով առանց փամփուշտի ձգանը սեղմելու տեխնիկային կարելի է արդեն անցնել փամփուշտով կրակելուն՝ առանց նշանառության կետի: Լավ է կրակել սպիտակ թղթի վրա: Այսպես ձգանային սեղման ուսումնահրությունից հետո անցնում են կրակոցը հրականացնելու ամբողջական համալիրի ուսումնասիրությանը: Ընդունելով կրակելու դիրք՝ գենքը բարձրացնում են նշանառության, պահում են ատրճանակը թիրախի «խնձորի» տակ, հստակ սեղմում են ձայնը այնքան ժամանակ, քանի դեռ տեղի չի ունեցել կրակոցը: Սպասել կրակոցի պահին հարկ չկա, այն պետք է լինի հանկարծակի:

ԱՏՐՃԱՆԱԿԻՑ ԱՐԱԳԾՆԹԱՑ ԿՐԱԿԵԼՈՒ ՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Ձեռքի բարձրացման, նշանը բռնելու ու ձգանը կառավարելու ուսուցումը: Ատրճանակի բարձրացումը ամբողջապես, հետո մաս-մաս, արագ և դանդաղ տեմպերով ցույց տալուց հետո, մարզիչը կանգնում է կրակողի կողքին և կատարում է այդ շարժումը նրա հետ միասին: Պետք է հետևել, որ սկսնակները վարժությունը ինքնուրուց կատարելու ժամանակ հստակ բարձրացնեն ձեռքը՝ առանց պոկումների և առանց ճաճանչադաստակային հողի շարժման:

Ձեռքի բարձրացումը կատարվում է առանց թիրախի, դանդաղ (սպիտակ թղթին կամ բաց երանգին): Հետո անցնում են ձեռքի արագ բարձրացմանը: Սովորողները ընդունում են ելման դիրք

հայացքն ուղղում են դեպի թիրախը: Մարզիչի ցուցումով նրանք արագ բարձրացնում են ատրճանակը վերև՝ մոտավորապես մինչև թիրախի տարածության 3/4-ի մակարդակին և միաժամանակ դիմավորում են նշանահատիկին ճեղքում չանելով գլխի ոչ մի ավելորդ շարժում:

Ձեռքի արագ բարձրացումը կատարվում է ժամանակի խնայողության և ձգանը ճիշտ սեղմելու համար: Հետագայում ձեռքի բարձրացման բարձրությունը հասցնում են մինչև թիրախի տակը, իսկ հետո մինչև այս թվերը՝ «6,7» և այլն: Ատրճանակի արագ բարձրացումը կատարվում է առանց սեղման և կրկնվում է մի քանի անգամ: Մինչև որ սովորողները սովորեն նշանահատիկը ատրճանակի ճեղքում դիմավորելը:

Ատրճանակով ձեռքը պետք է բարձրացվի հարթության մեջ, որն անցնում է հրաձիգից մինչև թիրախի մեջտեղը:

Ձեռքի բարձրացման արագությունը հետագայում փորբանում է, դանդաղ շարժման անցնելիս նշանահատիկը պետք է ճեղքում մնա: Այս շարժումը մշակվում է այնքան ժամանակ, քանի դեռ վարժությունը հստակ չի կատարվում, պետք է անցումը արագից դանդաղ կատարվի շատ սահուն:

Ամենամեծ սխալը, որ կատարում են համարյա բոլոր սկըսնակները, այն է, որ ձեռքը բարձրացնելու պահին ճաճանչադաստակային հողում թուլանում է դաստակը: Սովորելու սկզբնական շրջանում սրան առաջնահերթ ուշադրություն են դարձնում: Ձեռքի շարժման ուսուցումը կատարվում է առանց թիրախին կրակելու:

Սկզբում ձեռքի արագ բարձրացումը, իսկ հետո շարժման դանդաղացումը բերում են մի շարք առավելություններ.

1. Ձեռքի արագ բարձրացման հաշվին հրաձիգը ունի ժամանակի տնտեսում և դրա համար էլ հստակ է կատարում կրակոցը:

2. Ձեռքի շարժման հետագա դանդաղեցման շնորհիվ է ճշտվում ճեղքում նշանառության հատիկի դիրքը:

3. Ձեռքի շարժման դանդաղեցման վերջում ավելի հստակ է դառնում ձգանի սեղմումը:

4. Ավելի արագ են հայտնաբերվում սխալները:

Զգանի կառավարումը սև շրջանով կլոր թիրախին ատրճանակով արագընթաց կրակելու դեպքում ունի շատ ընդհանրություններ: Դրա համար էլ սկզբնական ուսուցումը կրելի է կատարել միաժամանակ:

Որո՞նք են այդ ընդհանրությունները.

1. Զգանի ճիշտ սեղմնան ցուցադրումը մարզիչի կողմից կրակողի կատարման համալիրում:

2. Սեղմնան ցուցադրումը մասնատված:

3. Հրաձիգի ինքնուրույն գործողությունները ձգանը կառավարելու ուղղությամբ և մարզիչի միջոցով սխալների հայտնաբերումը:

4. Զգանի սեղմնան մշակումը միաժամանակ գենքը բարձրացնելու հետ՝ առանց նշան բռնելը:

Արագընթաց հրաձգության տեխնիկային տիրապետելու և այն կատարելագործելու համար խորհուրդ է տրվում հետևյալ վարժությունները:

ԱՆՇԱՐԺ ԹԻՐԱԽԻՆ ԿՐԱԿԵԼԸ

Մարզիկներին ծանոթացնում են արագընթաց հրաձգության տեխնիկայի էլեմենտներին և անշարժ թիրախին կրակելու կանոնների հետ: Մշակվում է ատրճանակը պահած ձեռքի բարձրացման ձևը, սովորեցնում են ձգանը սեղմելու առանձնահատկությունները և նշանառությունը:

Ձեռքի բարձրացումը խորհուրդ է տրվում կատարել ուղղաձիգ և գծով սպիտակ թղթին կամ «T» տառի ձևով գծելով թղթին: Արագընթաց հրաձգությունը անցկացվում է փամփուշտով և առանց փամփուշտի, առանձին կրակոցներով և 3-5 կրակոցներից բաղկացած կրակահերթով՝ առանց կրակելու համար ժամանակի սահմանափակման:

ԴՐԱՋՈՒԹՅՈՒՆ ԱՆՇԱՐԺ ԹԻՐԱԽԻՆ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՇՎԱՐՄԱՄԲ

Սովորողներին ծանոթացնում են կրակոցի կատարման երեք վայույնային տեմպի առանձին էլեմենտներին ամողապես և 5 կրակոցից բաղկացած կրակահերթին: Անհրաժեշտ է հասնել նրան, որ բոլոր գործողությունները կատարվեն 3 վայրկյանի սահմաններում ոչ դանդաղ և ոչ էլ արագ: Վարժությունների կատարման արագությունը չպետք է բերի տեխնիկայի խախտման: Հրաձգությունը կատարվում է և առանց փամփուշտի, և փամփուշտով:

ՇՐՋՎՈՂ ԹԻՐԱԽԻՆ ԿՐԱԿԵԼԸ

Անհրաժեշտ է նախապատրաստվել ձեռքի բարձրացմանը, սովորել հստակորեն շարժել ձեռքը թիրախը շրջվելուց անմիջապես հետո: Թիրախի պտուման և շրջման ճիշտ ռեակցիայի ժամանակ գենքը բռնած ձեռքի անհրաժեշտ ձևը և շարժումների արա-

գությունը պետք է պահպանել 3 վայրկյանի ընթացքում շրջվող թիրախին կրակելը: Շարունակվում է ժամանակի խիստ սահմանափակ ռեժիմով կրակելու տեխնիկայի յուրացումը: Առանձին կրակոցների կատարումը և 3-5 կրակոցով կրակահերթի կատարումը ուղեկցվում է առանձին էլեմենտների և նրանց կապի, ամբողջ ցիկլի շարժման մշակումով:

ԱՊԱՏ ԹԻՐԱԽԻՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ ԴՐԱՋՈՒԹՅՈՒՆ

Նախավարժանքից հետո կատարում են մի քանի կրակահերթեր՝ առանց թիրախին մոտենալու: Այս դեպքում բացակայում է հոգեբանական ներգործության գործոնը՝ ամեն կրակոցից հետո միավորների հաշվելու: Այդպիսի հրաձգությունը անցկացվում է մաքուր տեխնիկական արդյունքները որոշելու և խոցելու միջին կետի հայտնաբերելու, գենքի նշանափորձության ճշտության համար: Շատ դեպքերում առանց թիրախին մոտենալու հրաձգության արդյունքները ավելի բարձր են, քանի յուրաքանչյուր կրակահերթից հետո արդյունքները հայտնելիս:

ԳԼՈՒԽ 7.

ՀՐԱԶԴԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՍՏԿԱՐԳԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՍԵԽԱՆԻՉՄԸ, ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, այսօր մրցումների անցկացումը հրաձիգ-մարզիկների հետ հանդիսանում է ուսումնամարզական գործընթացի բաղադրիչ մասը: Մրցումները հանդիսանում են հրաձային սպորտի գլխավոր միջոցը, որի առջև դրվում են տարբեր խնդիրներ: Դրանք հիմնականում կարող են ուղղված լինել մասսայականության ապահովմանը և բնակչության ներգրավմանը տվյալ մարզածի հետագա պարապնունքներին: Մրցումների նպատակն է՝ ուսումնամարզական աշատանքի ամփոփում, լավագույն մարզիկների և սպորտային կոլեկտիվների բացահայտում, սպորտային կարգերի և ուսումնական նորմատիվների կատարում, հավաքական թիմերի կազմավորում և այլ խնդիրների իրագործում: Այդ իսկ պատճառով ֆիզիկական կուլտուրայի կոլեկտիվներում անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել հրաձգասպորտի մրցումների կազմակերպմանը, քանի որ դրանցից են կախված մասնակիցների կողմից ցույց տրված արդյունքները:

Մրցումներին մասնակցելը հնարավորություն է տալիս մարզիկներին կատարելագործելու տեխնիկան և տակտիկան, զարգացնելու հոգեբանական պատրաստությունը, ֆիզիկական ընդունակությունները, ձեռք բերելու սպորտային պայքարը վարելու վարքը և այլն: Այդ իսկ պատճառով մրցումները անց են կացվում տարբեր տարիքային և որակավորում ունեցող խնդերի համար: Որպեսզի մրցումների առջև դրված խնդիրները լինեն լուծված, դրանք պետք է անցկացվեն կազմակերպված, հստակ և խիստ համապատասխան օրացույցային պլանով նախատեսված ժամկետին: Այդ ամենը պահանջում է երկարատև նախապատրաստական աշխատանք:

Հրաձային սպորտի մրցումները անցկացվում են մրցման կանոնների համապատասխան և տվյալ սպորտածի կանոնադրության հիման վրա, որնք նշակած են և հաստատվում են մրցումը անցկացնող կազմակերպության կողմից:
Մրցումները դասակարգվում են՝

ա) ըստ խնդիրների և նպատակի.

բ) մասշտաբի և սպորտային նշանակության.

գ) կազմակերպչական սկզբունքի.

դ) առաջնության որոշման և խաղարկման կարգի:

Ըստ խնդիրների կարող են անցկացվել չեմպիոնատներ (հիմնական տարիքային խմբերի մարզիկների համար) և առաջնություններ (տարեր տարիքային խմբերի համար), գավաթի խաղարկություն:

Նպատակայինը հատուկ ծրագրով ավանդական անցկացվող անվանական մրցումներ, հուշամրցումներ են, մրցաշղթանի բացման և փակնան արարողություններ և այլն:

Մրցումները կարող են լինել ընտրական՝ հավաքական թիմների կազմը որոշելու նպատակով, ստուգողական՝ սպորտային կարգերի և ուսումնական ծրաբերի նորմատիվների կատարման համար, ցուցադրական՝ սպորտային վարպետության ցուցադրման նպատակով և առողջարարական, որը անց է կացվում լայն մասսաների միջև:

Ըստ մասշտաբի և սպորտային նշանակության՝ մրցումները լինում են համաշխարհային, միջազգային, հանրապետական, տեղական, սկզբնական կազմակերպությունների:

Ըստ կազմակերպչական բնույթի՝ մրցումները կարող են լինել գերատեսչական և տարածքային:

Ըստ առաջնության որոշման բնույթի՝ մրցումները անց են կացվում առանձին մարզիկների, թիմերի միջև և բաժանվում են անհատական, թիմային, անհատական-թիմային:

Մրցումների պլանավորման համար անհրաժեշտ են հետևյալ հիմնական փաստաթղթերը.

1. օրացույցային պլան,

2. կանոնադրություն,

3. ծրագիր,

որոնք նախապես պատրաստվում են և հասատվում են մրցումները անցկացնող կազմակերպության կողմից:

Անցկացվող մրցման ժամկետները որոշելու համար հաշվի է առվագում տեղի բնակլիմայական պայմանները:

Մրցման կանոնադրությունը ուղարկվում է մասնակցող կազմակերպություններին ոչ ուշ, քան 1.5-2 ամիս առաջ և հանդիսանում է հիմնական փաստաթուղթ՝ մրցումների ղեկավարման համար:

Մրցման կանոնադրությունը կազմված է հետևյալ բաժիններից:

- մրցումների նպատակն ու խնդիրները
- անցկացման վայրը և ժամկետները.
- դեկավարությունը և անցկացնող կազմակերպությունը.
- մրցաման մասնակիցները.
- ժրագիրը և անցկացման պայմանները.
- թիմային և անհատական հաշվարկում, հաղթողնրի որոշման կարգը.
- հաղթողների պարգևատրումը.
- մասնակիցների ընդունման պայմանները.
- մրցմանը մասնակցելու համար հայտերի ներկայացման ժամկետները.
- հարցեր:

Մրցումների ժրագիրը և նրա բաշխումը, ըստ օրերի, կազմում է անցկացնող կազմակերպության, իսկ մեկնարկների գրաֆիկը՝ գլխավոր մրցավարական հանձնաժողովի կողմից:

Մրցումների անցկացման նախապատրաստական աշխատանքները սկսում են նախապես, անցկացնող կազմակերպության և գլխավոր մրցավարական հանձնաժողովի կողմնց:

Նախապատրաստական աշատանքները հետևյալն են.

- Կայրի ընտրումը (հրաձգարանի):
- Բնակավայրի և բազաների ընտրումը և տեղանքի ընտրումը (գենքի ստուգման և հրաձգության համար):
- Կանոնադրության ընտրումը:
- Ֆինանսավորման ծախսերի նախապատրաստում:
- Անհրաժեշտ փաստթերի նախապատրաստում:
- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի, մրցավարների և սպասարկող անձնակազմի ընտրում և հաստատում:
- Մասնակիցների, մրցավարների և սպասարկող անձնակազմի տեղափորում և սննդով ապահովում:
- Մասնակիցներին և մրցավարական անձնակազմին ապահովել տրանսպորտային միջոցներով, կազմակերպել հանգիստը:
- Որոշել զնքը պահելու կարգը:
- Մրցավարական փաստաթղթերի և գրենական պիտույքների պատրաստումը:
- Բժշկական ծառայության ապահովում:
- Մասնակիցների պարզաբանման ապահովումը:
- Ինֆորմացիայի և լրատվության միջոցների ապահովումը:
- Ազդագրերի և ժրագրի տարածումը:

Մրցումների կազմակերպման և անցկացման բոլոր աշխատանքների ֆինանսավորման հարցերը պետք է արտացոլվեն վաղորոք կազմված նախահաշվում:

Մրցավարկան հանձնաժողովը կոմպլեկտավորում է այն կազմակերպությունը, որ անց է կացնում մրցումը, կարող են հրավիրվել մրցավարներ այլ քաղաքներից: Մրցավարական հանձնաժողովը կազմված է գլխավոր մրցավարից, նրա տեղակալներից և գլխավոր քարտուղարից: Մրցավարական կազմի քանակը կախված է մրցումների մասշտաբից, մասնակիցնրի թվից և այլ գործոններից:

Քաղաքային և ռեգիոնալ մասշտաբի մրցումները, ինչպես կանոն, անց են կացվում 50 մետրանոց հրաձգարաններում, տարրությամբ 10 վահանակ:

Բացի այդ կարող են անցկացվել 25 մետրանոց հրաձգարաններում, արագընթաց հրաձգության համար ավտոմատ սարքավորումնով: Տվյալ դեպքում մրցավարական հանձնաժողովի կազմը կլինի հետևյալը՝

50-Ծ հրաձգարան

- Գլխավոր մրցավար-1
- Գլխավոր քարտուղար-1
- Կրակագիծ-2
- Թիրախների գծի վրա-2
- Արդյունքների որոշման հանձնաժողով-3

25 Ծ հրաձգարան

- Գլխավոր մրցավար-1
- Գլխավոր քարտուղար-1
- Կրակագիծ-1
- Թիրախների գծի վրա-1
- Արդյունքների որոշման հանձնաժողով-1
- Գլխավոր մրցավարական հանձնաժողովին կից ստեղծվում է ինֆորմացիոն ծառայություն և քարտուղարություն: Եվ բացի վերը նշված մրցավարական խմբից անհրաժեշտ է, որ լինի
- 1.Մրցավար- ինֆորմատոր-1
- 2.Մասնակիցներին կից մրցավար, ինքն էլ հենց գենքի գծով մրցավար-1

Մրցավարների ընդհանուր քանակը պետք է լինի ոչ պակաս, քան 15 հոգի:

Գլխավոր մրցավարական հանձնաժողովը իր աշխատանքը սկսում է նախօրոք, որ կարողանա մինչև մրցումների սկիզբը ավարտել բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ կապված մրցումների անցկացման հետ: Գլխավոր մրցավարը դեկավարում է մրցավարական հանձնաժողովի աշատանքները և պատասխանառու է դրանց հստակ իրագործման համար:

Մրցումների սկիզբ է համարվում դրոշի բարձրացման պահը: Բոլոր մրցավարները մրցման վայր պետք է ժամանեն 30-40 րոպե շուտ մրցումից առաջ և անհրաժեշտ փաստաթղթեր ստանալուց հետո գրադարձնեն իրենց տեղը մինչև կրակի բացելը:

1. Կրակագծի մրցավար - կրակագծի գլխավոր մրցավարը կողորդինացնում է մրցումների աշխատանքները կրակագծի և թիրախների գծի վրա: Կրակելուց 5 րոպե առաջ «Պատրաստ» լինելու հրաման է տալիս մանակիցներին, բացատրում է տվյալ վարժության կատարման պայմանները և 5 րոպեն լրանալուն պես տալիս է հրաման՝ «Լիցքավորել» որից հետո 2-3 վրկ. անց «կրակ» և միացնում է վայրկենաչափը:

2. Թիրախների գծի մրցավար - Այս մրցավարները լիովին ենթարկվում են կրակագծի գլխավոր մրցավարին: Մինչ վարժության կատարելը ստուգում է թիրախների ճշտությունը և կոդավորումը ըստ թիմերի:

3. Նրածգության արդյունքները որոշող մրցավար - Այս մրցավարներից մեկը որոշում է թիրախին կապած փանքուշտնորի քանակը, փոխանցում է հաշվարկված միավորների ճշտությունը և արդյունքը գրանցում է քարտում:

4. Մրցավար-ինֆորմատոր - գրանցում է մարզիկների տվյալները մրցման ընթացքում, ապահովում է հրածգության արդյունքների վերաբերյալ ինֆորմացիան (տվյալները), այդ արդյունքները համեմատվում են ավագ մրցավարի մոտ եղած արդյունքների հետ և հայտարարում է նախնական արդյունքները: Վերջնական արդյունքները հայտարարվում են մրցավարական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո:

5. Մասնակիցներին կից մրցավար - ապահովում է անվտանգությունը և կարգապահությունը մարզումների և մրցումների ընթացքում: Կազմակերպում է հանդերձանքի ստուգում, իսկ գենքի գծով մրցավարի հետ՝ նաև հրածիգների գենքերի ստուգում:

Մասնակիցներին կից մրցավարին հանձնարարվում է մրցաշրջանի բացման և փակման արարողությունների անցկացումը, հան-

դիսավոր պայմաններում հաղթողների պարգևատրման կազմակերպումը և այլն:

Մրցումների ավարտից հետո մրցավարական հանձնաժողովի կողմից կազմվում է արձանագրություն տվյալ մրցման արդյունքների վերաբերյալ:

Վերջում կատարվում են հետևյալ աշատանքները՝

1. Կարգի բերել բոլոր փաստաթղթերը, որոնք առնչվում են տվյալ մրցումների հետ:
2. Մրցումների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը հանձնել թիմերի ներկայացուցիչներին և մրցումը կազմակերպող կազմակերպությանը:
3. Հանձնել անցկացնող կազմակերպությանը գլխավոր մրցավարի և նրա տեղակալի հաշվետվությունները:
4. Վարձատրել նախահաշվով նախատեսված ֆինանսական բոլոր ծախսերը:
5. Հանձնել ֆինանսական հաշվետվություն:
6. Զօգտագործված մրցանակները հետ հանձնել դրանք տրամադրող կազմակերպությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ԽԿՅԴՀ Ը.Հ.** հտՏՐՑՈՉՎՈ՛ րՑՐԱՍԻՆՈՒ ԻՌ-Ի Ծ.:1987.
 - ԽԼԺՄՆ Թ.Ը.** կցսպՉՈ՛ րՑՐԱՍԻՆՈՒ-ՔՏՐ ՈՉՊՑ-Ծ.: 1989.
 - ԹԸԼԺՄՉԺԼԺ Խ.Ծ** հՑՐԱՍԻՆ Ո ՑՐԱՎԱՐ. ՂԱԶ. Ո ՀԱՏՏՐՑ-Ծ.: 1969.
 - ԺԹԿՅԴԽԼԺ Ը.Ժ.** հՑՐԱՍԻՆՈՒ ՈՉ ՄՎԱԿՈՑՈՒԽԱՐՄՈՒ ՉՈՎՑՏԾՍ ԼՑՊՈՑ. ԺԿԻԸԸ-ՀՀՀՀ-Ծ.: 1986.
 - ԻԼԽԼԺԸ Ը.Հ.** ԾՊՑՏՊՈՍՈ ՑՐՈՎԱՐՑՑՈՒ ԻՑՐԱՍԻՆ. ԻՄՏՐՑ հՕԺԸ.ԼՑՊՈՑ.ԺԿԻԸԸ-ՀՀՀՀ-Ծ.: 1986.
 - ԽԿՅԴՀ Ը.Հ.** հՏՉԱՐՔՎՈՎՑՑՈՎՈՎՈՎ Չ ՄԳՍԱՎՑՆ ԻՑՐԱՍԻՆՈՎ. ԼՑՊՈՑ. ԺԿԻԸԸ-ՀՀՀՀ-Ծ.: 1975.
 - ԽԿԾԿԿԻՆԱԹ Ը.Ը.** ԾՈՒԽԱՆՑՎՈ՛ ՄՏՊԵՑՑՑՈՎՈՎ ԻՑՐԱՍԻՆ. ՈՒԾՐՊՎՈՒՄՈ. ԼՑՊՈՑ. ԺԿԻԸԸ-ՀՀՀՀ-Ծ.: 1962.
 - Վ.ՕՐԱՆՅԱՆ,
Ս.ԱՄՐԳԱՐՅՅԱՆ,
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կողիշ.** Ուզմագիտություն 8-րդ, 9-րդ դասարաններ, Երևան, «Աստղիկ» գրատուն, 2001 թ., էջ 112, 120

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. Ներածություն	3
ԳԼՈՒԽ 2.Հրաձգություն մարզաձիկ և զենքերի բնութագիրը	7
2.1 Հրաձգության բնութագիրը	7
2.2. Մարզական գենքերի տեսակները, բնութագրումը	11
ԳԼՈՒԽ 3. Բալիստիկա	12
3.1. Ներքին բալիստիկա	12
3.2. Արտաքին բալիստիկա	14
3.3. Գնդակի սկզբնական արագություն	18
ԳԼՈՒԽ 4.Սպորտային գենքեր և զինամթերքներ	19
4.1. Փոքր և խոշոր տրամաչափային գենքեր	20
4.2. Օղամղիչ գենքեր	25
4.3. Փամփուշտի կառուցվածքը	25
4.4. Կալաշնիկովի ավտոմատ	27
ԳԼՈՒԽ 5. Սարգումների և ուսումնական պարապնումների ժամանակ գենքերի և զինամթերքի օգտագործման անվտանգության կանոնները	30
ԳԼՈՒԽ 6.Սպորտային հրաձգության վարժությունների ուսուցման և կատարելագործման մեթոդիկան	32
6.1. Ստենդային հրաձգություն	32
6.2. Գնդակային հրաձգություն /պառկած, ծնկած, կանգնած դիրքից/	33
6.3. Օղամղիչ հրացանից կրակելու ուսուցման և կատարելագործման մեթոդիկան	45
6.4. Ատրճանակից կրակելու ուսուցման և կատարելագործման մեթոդիկան	46
ԳԼՈՒԽ 7.Հրաձգային սպորտի մրցումների համակարգը, կազմակերպման և անցկացման մեխանիզմը, մրցավարության կանոնները	56
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	62

